ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Девятков А.* Международные связи ЕАЭС к 2025г. // Перспективы развития проекта ЕАЭС к 2025 году. Рабочая тетрадь. Спец.выпуск // Российский совет по международным делам. М.: НП РСМД, 2017. С. 79.
2. Евразийский экономический союз / Под ред. Е.Ю. Винокурова. С-Пб: ЦИИ ЕАБР, 2017, С. 161.
3. *Девятков А.* Международные связи ЕАЭС к 2025г. // Перспективы развития проекта ЕАЭС к 2025 году. Рабочая тетрадь. Спец.выпуск // Российский совет по международным делам. М.: НП РСМД, 2017. С. 81.
4. Вопросы и ответы по Соглашению о свободной торговле между Евразийским экономическим союзом и Социалистической Республикой Вьетнам, С. 17 // http://www.eurasiancommission.org/ru/act/trade/dotp/sogl_torg/Documents/Forms/AllItems.aspx.
5. Евразийский экономический союз / Под ред. Е.Ю. Винокурова. С-Пб.: ЦИИ ЕАБР, 2017, СС. 162–163.
6. *Кулжабаева Ж.* Новые зоны свободной торговли ЕАЭС как факторы обеспечения экономической бесопасности интеграционного сотрудничества евразийских государств в Азиатско-Тихоокеанском регионе // Международное сотрудничество евразийских государств: политика, экономика, право, № 2, 2017. С. 26.
7. Евразийский экономический союз // Под ред. Е.Ю. Винокурова. С-Пб.: ЦИИ ЕАБР, 2017, СС. 164–169.
8. http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_stat/tradestat/tables / extra/Pages/2016/12_180.aspx

ЦЕЛЕСООБРАЗНОСТЬ СОЗДАНИЯ ЗОН СВОБОДНОЙ ТОРГОВЛИ МЕЖДУ ЕВРАЗИЙСКИМ ЭКОНОМИЧЕСКИМ СОЮЗОМ И ТРЕТЬИМИ СТРАНАМИ

М.А. Авагян

АННОТАЦИЯ

В статье представлены перспективы торгового сотрудничества между Евразийским экономическим союзом и третьими странами в рамках формирования зон свободной торговли. Были отмечены экономические выгоды и преимущества, вытекающие из деятельности зон свободной торговли с отдельными странами, а также другие возможные формы двустороннего сотрудничества.

Евразийский экономический союз (ЕАЭС), созданный в качестве региональной экономической интеграционной группировки, официально начавшей свою работу 1 января 2015 года, по-прежнему сталкивается с рядом проблем – не только с точки зрения укрепления взаимных экономических связей между государствами-членами, но и с точки зрения активизации торгово-экономических отношений с третьими странами. Учитывая тот факт, что, с одной стороны, ЕАЭС не является самодостаточным рынком, а часть внутреннего спроса удовлетворяется за счет товаров, импортируемых из других стран, и, с другой стороны, необходимостью стимулировать производство и экспорт конкурентоспособной продукции, чтобы позиционировать себя в мировой экономике и обеспечивать экономическое развитие, – на повестке дня стоит вопрос о заключении более выгодных торговых соглашений на основе укрепления международного сотрудничества ЕАЭС с другими странами и региональными экономическими организациями.

Очевидно, что осуществимость международного экономического сотрудничества с третьими странами в рамках ЕАЭС зависит не только от экономических интересов государств-членов, но и от их географического положения. Таким образом, в плане расширения внешнеэкономических связей для Казахстана и Кыргызстана может сыграть важную роль заключение торговых соглашений ЕАЭС со странами азиатского региона, в частности, с Китаем, для Армении – с Ираном (также с Турцией в случае восстановления дипломатических отношений и открытия границы), для Белоруссии – со странами ЕС, и для России – как с азиатскими, так и с европейскими странами.

В настоящее время около 50 стран, включая развитые страны, выразили заинтересованность в заключении соглашений о свободной торговле с ЕАЭС. На сегодняшний день ЕАЭС подписал Соглашение о зоне свободной торговли только с Вьетнамом (29.05.2015), и было подписано временное соглашение о создании зоны свободной торговли с Ираном (17.05.2018). В то же время ведутся переговоры с такими странами, как Сингапур, Израиль, Египет, Индия, Южная Корея, Монголия и Сербия.

Подписание торговых соглашений с Китаем и Европейским союзом также может сыграть важную роль в расширении внешнеторговых и экономических связей ЕАЭС, что позволит ЕАЭС стать мостом между Европой и Азией. В отличие от Китая, который имеет много общих точек сотрудничества с ЕАЭС и не имеет серьезных политических разногласий со своими членами, он стремится предпринять шаги для установления более широких экономических связей с ЕАЭС, а ЕС, наоборот, пока не склонен рассматривать ЕАЭС в качестве потенциального торгового партнера из-за политических проблем с Россией. Вместо этого ЕС предпочитает развивать свои отношения с государствами-членами ЕАЭС на двусторонней основе. Такими странами являются Казахстан и Армения, которые заключили, соответственно, соглашения о всеобъемлющем и расширенном партнерстве (21.12.2015) и соглашения о всеобъемлющем и расширенном партнерстве (24.11.2015) с ЕС. Углубление экономического сотрудничества с ЕС имеет ключевое значение для ЕАЭС, поскольку ЕС является не только основным торговым партнером большинства стран ЕАЭС, но и основным источником притока иностранного капитала в ЕАЭС, а также основным источником модернизации и технологического обновления экономики стран-членов. Следует отметить, что в последнее время некоторые страны-члены ЕС (Германия, Италия, Греция, Франция) начали выступать за развитие взаимоотношений с ЕАЭС.

Что касается Китая, то соглашение о торгово-экономическом сотрудничестве между Китаем и ЕАЭС уже заключено 17.05.2018г., что по своей природе не является преференциальным и не предполагает отмены тарифных ограничений. В то же время следует отметить, что государства-члены ЕАЭС пока не имеют четкого подхода к вопросу создания зоны свободной торговли с Китаем. Проблема заключается в том, что они не полностью подготовлены к «атаке» Китая, так как крупный импорт китайских товаров может нанести значительный ущерб многим секторам национальной экономики.

Оценки показывают, что государства-члены ЕАЭС имеют большие объемы внешней торговли со странами ЕС и Китая. Это означает, что создание зон свободной торговли с последними отвечает экономическим интересам всех стран ЕАЭС, конечно, принимая во внимание тот факт, что до их создания необходимо обеспечить достаточный уровень модернизации и технологического насыщения национальных экономик для противодействия конкурентоспособности товаров, импортируемых из стран ЕС и Китая. Что касается создания зон свободной торговли с остальными странами-кандидатами (Вьетнам, Сингапур, Израиль, Египет, Индия, Иран, Сербия, Южная Корея и Монголия), целесообразность и эффективность таких зон для всех государств-членов ЕАЭС неодинакова. Так, с учетом удельных весов двустороннего товарооборота с этими странами в общем объеме внешней торговли стран ЕАЭС, становится ясно, что в случае Армении целесообразно создать зону свободной торговли с Ираном и Индией, для Беларуси – с Индией и Израилем, для Казахстана – с Индией, Ираном и Южной Кореей, для Кыргызстана – с Индией и

Ираном, а для России – с Южной Кореей, Индией, Египтом и Ираном. Принимая во внимание тот факт, что все страны-участницы ЕАЭС имеют относительно большие объемы внешней торговли с Индией, можно сделать вывод, что на данном этапе более целесообразно создать зону свободной торговли между Индией и ЕАЭС.

Таким образом, можно отметить, что необходимость создания зон свободной торговли, которая в настоящее время обсуждается с различными странами, не является однозначной и обоснованной во всех государствах-членах ЕАЭС, что говорит о том, что при принятии решений о создании зон свободной торговли с третьими странами необходимо учитывать необходимость обеспечения высокой экономической эффективности всех государств-членов ЕАЭС в результате их создания.

Ключевые слова: зона свободной торговли, интеграция, таможенная пошлина, тарифное ограничение, товарооборот.

EXPEDIENCY OF FORMATION OF FREE TRADE ZONES BETWEEN THE EURASIAN ECONOMIC UNION AND THIRD COUNTRIES

M. Avagyan

ABSTRACT

The article presents prospects for trade cooperation between the Eurasian Economic Union and third countries in the framework of the formation of free trade zones. The economic benefits and advantages resulting from the activities of free trade zones with certain countries, as well as other possible forms of bilateral cooperation are addressed.

Keywords: free trade zone, integration, customs duty, tariff restriction, commodity turnover.

УДК 338.2

Поступила: 08.11.2019г.
Сдана на рецензию: 09.11.2019г.
Подписана к печати: 25.12.2020г.

ԺԱՄԱՆՄԱՆ ԳՆԱՀԱՏՎԱԾ ՊԱՀԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ ԱՋԱԿՑՈՂ ՎԵԿՏՈՐՆԵՐԻ ՄԵԹՈԴԻ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ

Ռ.Ա. Գևորգյան, Տ.Ս. Քարամյան

Երևանի պետական համալսարան

tigran-met@mail.ru, rubengevorgyan@ysu.am

ԱՄՓՈՓՈՒՄ

Երևան քաղաքի ռազմավարական զարգացման առանցքային ոլորտներից մեկը տրանսպորտն է, որը զգալի ազդեցություն ունի օդի որակի, տնտեսական աճի, ինչպես նաև սոցիալական ներառման վրա: 2017թ. մեկնարկած նոր հասարակական տրանսպորտային ցանցի ներդրումը նպատակաուղղված է քաղաքի հնացած և անարդյունավետ ավտոբուսային ու միկրոավտոբուսային հավաքակազմը նորացնելուն: Աշխատության նպատակն է իրականացնել տարբեր տրանսպորտային միջոցների ժամանման գնահատված պահի կանխատեսումը մեքենայական ուսուցման մոդելների միջոցով, որը հնարավորություն կտա տրանսպորտային ծառայություններից օգտվողներին ճիշտ կառավարել իրենց ժամանակը: Սույն աշխատությունում աջակցող վեկտորների մեթոդի օգնությամբ գնահատվել է Երևան քաղաքում կամայական երթուղու տևողությունը խցանումների առկայության պարագայում: Ստացված արդյունքների շեղումը երթուղիների իրական տևողությունից միջինում կազմում է 3,13 րոպե: Դիտարկված մոդելի արդյունքները արդիական են և՛ պետական, և՛ մասնավոր սեղտորի այն ընկերությունների համար, որոնց գործունեությունը առնչվում է տրանսպորտային համակարգի հետ:

Հիմնաբառեր՝ մեքենայական ուսուցում, աջակցող վեկտորների մեթոդ, ռեգրեսիոն մոդելներ, տրանսպորտ:

Ներածություն

Երևան քաղաքի բնակչության տրանսպորտային սպասարկումն իրականացվում է ավտոբուսներով, միկրոավտոբուսներով, տրոլեյբուսներով և մետրոպոլիտենով: Հասարակական տրանսպորտի համակարգն իր մեջ ներառում է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն», «Երևանի էլեկտրատրանսպորտ», «Երևանի ավտոբուս», «Երևանտրանս» ՓԲ ընկերությունները և 53 մասնավոր կազմակերպություն, որոնք պայմանագրային հիմունքներով կանոնավոր ուղևորափոխադրումներ են իրականացնում Երևանի ներքաղաքային ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիներում: Քաղաքի ավտոբուսային և միկրոավտոբուսային հավաքակազմը բաղկացած է տարբեր մակնիշի 668 ավտոբուսից և մոտ 1400 միկրոավտոբուսից, որոնց համար գործող երթուղային ցանցով նախատեսված է համապատասխանաբար 46 (փաստացի՝ 41) ավտոբուսային և 68 (փաստացի՝ 72) միկրոավտոբուսային երթուղի: Վերջին տարիներին միկրոավտոբուսների թվաքանակի կրճատման հետևանքով զգալիորեն (մոտ 1200-ով) նվազել է միկրոավտոբուսներով իրականացվող ուղևորափոխադրումների ծավալը, չնայած ուղևորափոխադրումների այս եղանակը համարվում է ամենատարածվածը Երևանում: Տրոլեյբուսային ավտոպարկը բաղկացած է 79 տրոլեյբուսից, որոնք գտնվում են «Երևան էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի հաշվեկշռում և որոնց հատկացված է գործող երթուղային ցանցի 10 երթուղի: Վերգետնյա էլեկտրատրանսպորտի գործունեության վերլուծության արդյունքում պարզվել է, որ 2017թ. որոշակիորեն նվազել է տրոլեյբուսներով տեղափոխվող ուղևորների քանակը (մոտ 5,5%-ով), և տեսակարար կշիռը ներքաղաքային ընդհանուր ուղևորափոխադրումներում կազմել է մոտ 2,6%: Երևանի մետրոպոլիտենում առկա է 45 վագոն: Մետրոպոլիտենով իրականացվող ուղևորափոխադրումների ծավալը աճի միտում ունի և 2017թ. արձանագրվել է ուղևորափոխադրումենրի ծավալի աճ 3,2%-ով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ինչպես նաև 7,7% աճ՝ ընդհանուր ուղևորափոխադրումների ծավալում:

Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի օպտիմալացումը մինչ օրս դանդաղ է ընթացել: Տրասնպորտային համակարգում առկա հիմնախնդիրներներից են՝

1. Ոչ արդյունավետ գործող երթուղային ցանցը. այն չի բավարարում մայրաքաղաքի կանոնավոր ուղևորափոխադրումների գործընթացին ներկայացվող առկա պահանջներին:
2. Միասնական տոմսային համակարգի բացակայությունը:
3. Ավտոբուսային և տրոլեյբուսային հավաքակազմերի ոչ համալրացումը:
4. Վերգետնյա տրանսպորտի շարժակազմի տեսականու և դրանց տեխնիկական չափանիշների ոչ բարվոք վիճակը:
5. Ուղևորների փոխադրման համար գանձվող վճարի շրջանառության թափանցիկության բացակայությունը:
6. Միկրոավտոբուսների տեսակարար մեծ կշիռը:
7. Ուղևորների տրանսպորտային սպասարկման որակի ոչ բավարար մակարդակը:
8. Վերգետնյա էլեկտրատրանսպորտի տնտեսության ոչ բավարար վիճակը:
9. Երևանի մետրոպոլիտենի հնարավորությունների սահմանափակ լինելը, շարժակազմի և տնտեսության վիճակի բարելավման անհրաժեշտությունը:
10. Ճանապարհատրանսպորտային գործոնների բնութագրիչներին համահունչ զարգացման թելադրմամբ ճանապարհային երթևեկության կազմակերպմանն ուղղված միջոցառումների իրավիճակային համապատասխանեցման կարիքը:
11. Հասարակական տրանսպորտի կանգառների ոչ արդյունավետ տեղաբաշխվածությունը. դրանք ամբողջությամբ բարեկարգված և կահավորված չեն:
12. Հաշմանդամություն ունեցող անձանց տրանսպորտային սպասարկման մակարդակի ոչ բավարար մակարդակը:
13. Ոչ ժամանակակից տրանսպորտային միջոցների շահագործման արդյունքում առաջացող բնապահպանական խնդիրները:

Այդուհանդերձ, 2017թ. Երևանի քաղաքապետարանը հայտարարել է Երևանի հասարակական տրանսպորտի ոլորտի համակարգային բարեփոխումների մեկնարկի մասին, ինչի շրջանակներում Ասիական զարգացման բանկի աջակցությամբ հայտարարված միջազգային մրցույթում հաղթող ճա-


նաչված «Դաբլյու Վայ Ջի Ինտերնեյշնլ Լիմիթիդ» խորհրդատվական կազմակերպությունը լավագույն միջազգային փորձի հիման վրա մշակում է մայրաքաղաքի հասարակական տրանսպորտի բարեփոխումների փաթեթ, որն իրենից ենթադրում է հստակ հաշվարկների և չափորոշիչների հիման վրա նոր արդյունավետ երթուղային ցանցի նախագծում, հստակ պատկերացում տրանսպորտային պարկի քանակի և տեսականու, սպասարկման չափորոշիչների, ինչպես նաև ուղևորահոսքի մասին, միասնական էլեկտրոնային ամսային համակարգերի ներդրման հնարավորության վերլուծություն, զեղչային համակարգի կիրառման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում, հասարակական տրանսպորտի մնացած ձևերի արդյունավետ փոխհամագործակցություն ու շահագործում և այլն: Նախատեսվում է ներդնել ավտոբուսային ցանցի նոր մոդել և, ապահովելով փոխգործունեությունը հասարակական տրանսպորտի այլ ձևերի հետ, սակագների ու տոմսային ինտեգրված համակարգ, ինչպես նաև մշակել հասարակական տրանսպորտի պատասխանատու մարմնի ստեղծման հայեցակարգ: Նոր մոդելը պետք է հիմնվի միկրոավտոբուսների շահագործումից աստիճանաբար հանելու և դրանք քաղաքային ավտոբուսներով փոխարինելու ընթացիկ ջանքերի վրա: Սույն աշխատանքի նպատակն է առաջարկել այլընտրանքային լուծումներ Երևան քաղաքում առկա տրանսպորտային հիմնախնդիրների լուծման համար:

Երևան քաղաքի տրանսպորտային համակարգում առկա հիմնախնդիրներին լուծում տալու համար Phyton ծրագրավորման լեզվի միջոցով կառուցված աջակցող վեկտորների մեթոդը (Support Vector Machine – SVM), հնարավորություն է տալիս գնահատել Երևան քաղաքի ճանապարհների անցանելիության ժամանակը խցանումների առկայության պարագայում և կարող է օգտագործվել 2017թ. մեկնարկած մի շարք ծրագրերում, որոնք ուղղված են Երևան քաղաքում տրանսպորտային համակարգի բարեփոխմանը: Որպես տվյալների բազա օգտագործվել են Yandex-ից վերցված տվյալները (թվով 10,050 ճանապարհ և 140,700 տվյալ): Ըստ ստացված արդյունքների՝ խցանումներով ճանապարհների անցման գնահատված ժամանակը (Ա կետից Բ կետ հասնելու գնահատված ժամանակը) շեղվում է իրական (Yandex) գնահատականից միջինում 3,13 րոպեով:

Աջակցող վեկտորների մեթոդ. SVR (Support vector regression) [1, 2]: SVM (Support Vector Machine)-ը համարվում է սուպերվայզ[1] ուսուցման ամենաազդեցիկ մոտեցումներից մեկը և օգտագործվում է դասակարգման խնդիրներում ու ռեգրեսիոն վերլուծության ժամանակ: Ենթադրենք ունենք վարժեցման $\{(x_1, y_1), \ldots, (x_m, y_m)\} \subset X \times \mathbb{R}^n$ հավաքածուն, որտեղ X-ը մուտքային տվյալների բազմությունն է: Նպատակն է գտնել այնպիսի «հարթ» $f(x)$ ֆունկցիա, որի առավելագույն ցրվածքը կլինի ε ամբողջ վարժեցման հավաքածուի համար: Դիտարկենք գծային ֆունկցիայի դեպքը. $f(x) = w \cdot x + b,$ որտեղ $w \in X,\ b \in \mathbb{R}$, $(\cdot)$ վեկտորական արտադրյալն է (dot product): $f(x)$ ֆունկցիան հարթեցնելու համար w-ն պետք է հնարավորինս փոքր լինի, հետևաբար պետք է մինիմալացվի $w - \mathit{հ}$ Էվկլիդյան նորմը՝ $\|w\|^2$: Անհրաժեշտության դեպքում նպատակային ֆունկցիային կարելի է ավելացնել ξ_i, ξ_i^* թույլ փոփոխականներ՝ թույլ տալով ֆունկցիային ընդունել որոշակի սխալների մակարդակ: Ներկայացնենք նպատակային ֆունկցիան և սահմանափակումները.

$$\frac{1}{2}\|w\|^2 + C\sum_{i=1}^{m}(\xi_i + \xi_i^*) \ \rightarrow min, \textit{երբ} \begin{cases} y_i - w \cdot x_i - b \leq \varepsilon + \xi_i \\ w \cdot x_i + b - y_i \leq \varepsilon + \xi_i^*, \\ \xi_i, \xi_i^* \geq 0 \end{cases}$$

որտեղ $C > 0$ ցույց է տալիս ընդունելի սխալների չափը *f(x)* –ի համար:



Նկար 1. Գծային SVM-ի օրինակ. ընդունելի սխալների չափը f (x)-ի համար:

[1]Սուպերվայզ ուսուցման ալգորիթմները վարժեցնում են ֆունկցիաներ, որոնք որոշակի մուտքային տվյալներ(x) ձևափոխում են ելքային տվյալների (y)՝ հիմնվելով որոշակի վարժեցման «օրինակների» ((x_i, y_i), որտեղ i-ն վարժեցման հավաքածուի անդամներն են) վրա:

Լագրանժի ֆունկցիայի միջոցով գտնվում են ֆունկցիայի մինիմումի կետերը, մինիմումի արժեքը և համապատասխան պարամետրերը [3].

$$L = \frac{1}{2}\|w\|^2 + C\sum_{i=1}^{m}(\xi_i + \xi_i{}^*) - \sum_{i=1}^{m}\alpha_i(\varepsilon + \xi_i - y_i + w\cdot x_i + b) - \sum_{i=1}^{m}\alpha_i^*(\varepsilon + \xi_i^* - y_i - w\cdot x_i + b) - \sum_{i=1}^{m}(\eta_i\xi_i + \eta_i^*\xi_i^*),$$

$\Longrightarrow$\` $\partial_b L = \sum_{i=1}^{m}(\alpha_i^* - \alpha_i) = 0, \partial_w L = w - \sum_{i=1}^{m}(\alpha_i^* - \alpha_i)x_i = 0, \partial_{\xi_i^{(*)}} L = C - \alpha_i^{(*)} - \eta_i^{(*)} = 0$:

Տեղադրելով Լագրանժի ֆունկցիայի մասնակի ածանցյալների միջոցով ստացված արժեքները նպատակային ֆունկցիայի մեջ՝ կստանանք պահանջվող մինիմումի արժեքը: Եթե տեղադրենք $w = \sum_{i=1}^{m}(\alpha_i^* - \alpha_i)x_i$ նպատակային ֆունկցիայի մեջ, կստանանք $f(x) = \sum_{i=1}^{m}(\alpha_i - \alpha_i^*)(x_i \cdot x) + b$, որտեղից երևում է, որ ֆունկցիան կախված է միայն x-երի վեկտորական արտադրյալից: Այլ կերպ ասած, «օգնական վեկտորները» անկախ են X տվյալների բազմության տարածությունից, և ամբողջ ալգորիթմը կարող է բնութագրվել որպես տվյալների վեկտորական արտադրյալ:

SVM հետ առնչվող մեկ այլ առանցքային գաղափար է կերնելյան հնարքը: Քանի որ SV ալգորիթմը կախված է դիտարկված օրինակների վեկտորական արտադրյալից (dot product), ապա յուրաքանչյուր գծային ֆունկցիա կերնելյան հնարքի միջոցով կարելի է ձևափոխել ոչ գծայինի՝ փոխարինելով յուրաքանչյուր x $\phi(x)$ ֆունկցիայով, իսկ վեկտորական $(x_i \cdot x)$ արտադրյալը՝ $k(x, x_i) = \phi(x)\cdot\phi(x_i)$-ով:

$$f(x) = \sum_{i=1}^{m}(\alpha_i - \alpha_i^*)(x_i \cdot x) + b \Longrightarrow f(x) = \sum_{i=1}^{m}(\alpha_i - \alpha_i^*)k(x, x_i) + b :$$

Կերնելյան հնարքը կիրառվում է ոչ գծային մոդելներ վարժեցնելու համար: Այլ կերպ ասած, կերնելյան հնարքի միջոցով ֆունկցիան փոխում է իր

չափելիությունը: Գոյություն ունեն կերնելների մի շարք տարատեսակներ, որոնցից ամենատարածվածը Գաուսյան կերնելն է՝

$$k(u, v) = \mathcal{N}(u - v, 0, \sigma^2 I),$$

որտեղ $N(x, \mu, \sigma)$ ստանդարտ նորմալ բաշխումն է:

Այլ կիրառվող կերնելներից են $k(x, x_i) = (x \cdot x_i)^p$, $k(x, x_i) = e^{-\frac{\|x - x_i\|^2}{2\sigma^2}}$ և այլն:

Դասակարգման խնդիրներում SVM-ի կիրառության սկզբունքը նույնն է: Այստեղ նպատակն է տվյալների բազան բաժանել այնպես, որ նրանց միջև հեռավորությունը լինի առավելագույնը: Կերնելյան հնարքի կիրառման պարագայում նպատակն է դասակարգման ֆունկցիայի չափելիության փոփոխության միջոցով ավելի ճիշտ դասակարգիչ կառուցել:

Արդյունքներ. Երևան քաղաքում առկա տրանսպորտային համակարգի հիմնախնդիրներին այլընտրանքային լուծում տալու, ինչպես նաև 2017թ. մեկնարկած հասարակական տրասնպորտի նոր ծրագրի սահուն ներդրմանը նպաստելու համար կառուցված մոդելը կանխատեսում է ժամանման գնահատված պահը խցանումների առկայության պարագայում (ժամանման գնահատված պահ, այսուհետ՝ ETA, ժամանման գնահատված պահը խցանումների առկայության պարագայում, այսուհետ՝ ETA-Jam): ETA-ը կամայական Ա կետից Բ կետ տանող ճանապարհի անցման գնահատված ժամանակն է: Որպես տվյալների բազա օգտագործվել են Yandex Map-ից վերցված տվյալները: Նշենք, որ բոլոր մոդելները կառուցվել են Phyton ծրագրավորման լեզվի միջոցով: Նախ, Yandex-ի քարտեզներում գեներացվել են պատահական կետեր, որոշվել են այդ կետերով անցնող ճանապարհները և հաշվարկվել այդ ճանապարհների երկարությունները: Այնուհետև, Yandex-ի քարտեզներից վերցվել են տվյալ ճանապարհների անցման մոտավոր ժամանակները խցանումների դեպում և առանց խցանումների: Հաշվի է առնվել նաև շաբաթվա առանձին օրերի և օրվա առանձին ժամերի ազդեցությունը ժամանման գնահատավաժ պահի վրա, քանի որ կախված շաբաթվա օրերից և ժամերից Երևան քաղաքի որոշ փողոցներ այս կամ այն աստիճանի խցան-

ված են: Yandex-ից վերցված տվյալները մեր մոդելների համար հանդիսանում են վարժեցման հավաքածուներ, այսինքն այդ տվյալների միջոցով իրականացվել է մոդելների վարժեցումը:

	A0	A1	B0	B1	Distance	Weekday	Path	Hour	ETA_JAM
0	44.499901	40.222903	44.541364	40.205605	8400.0	2	տիգրան+պետրոսյանի+փողոց head+northeast turn+le...	17	23.0
1	44.497391	40.220717	44.475111	40.194955	4600.0	2	եղվարդի+խճուղի head+northwest turn+left turn+l...	17	12.0
2	44.499105	40.219701	44.453348	40.178074	8600.0	2	եղվարդի+խճուղի head+southeast turn+right turn+...	17	21.0
3	44.499097	40.223226	44.444760	40.185080	9700.0	2	եղվարդի+խճուղի+անաստաս+միկոյան head+northeast ...	17	22.0
4	44.498239	40.221037	44.513963	40.135939	15900.0	2	հալաբյան+փողոց head+southeast turn+right turn+...	17	41.0

Նկար 2. Մուտքային տվյալների օրինակ՝ աղյուսակային տեսքով:

Նկար 2-ում ներկայացված է մուտքային տվյալների 5 օրինակ, որտեղ A0, A1 և B0, B1 կետերը ցույց են տալիս պատահականորեն գեներացված Ա և Բ կետերի աշխարհագրական լայնության և երկայնության կոորդինատները, Distance-ը Ա և Բ կետերի միջև ընկած ճանապարհի երկարությունն է մետրերով, Weekday-ը շաբաթվա օրերն են, Path-ը՝ Ա կետից Բ կետ ընկած ճանապարհի հետագիծը, Hour-ը՝ օրվա ժամերը, իսկ ETA-Jam-ը՝ ժամանման գնահատված պահը խցանումների առկայության պարագայում: Շաբաթվա օրերի համար ներմուծվել են վեց կեղծ փոփոխականներ (dummy variables), որոնցից յուրաքանչյուրը համապատասխանում է շաբաթվա մեկ օրի: Յոթերորդ օրվա արժեքը կախված է նախորդ վեց օրից: Օրինակ, եթե առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ օրը չէ, հետևաբար յոթերորդ օրն է: Ճանապարհների հետագծերին Facebook Starspace (nod to vec techniques)-ի [6] միջոցով վերագրվել են արհեստական վեկտորներ, և այդ վեկտորները նույնպես օգտագործվել են որպես մուտքային տվյալներ մոդելների կառուցման ժամանակ: Տվյալների գեներացման արդյունքում ստացել ենք 10,050 ճանապարհ (140,700 տվյալ), որի մի մասը (80%) օգտագործվել է որպես վարժեցման հավաքածու, իսկ մյուս մասը (20%)՝ թեստային հավաքածու:

Աղյուսակ 1.

Կառուցված մոդելների թեստային արմատային միջին քառակուսային շեղումների համեմատություն:


Model	Test RMSE
SVR(Kernel = “Radial Basis Function”, C = 100)	3.13 րոպե
Polynomial Regression (Degree = 3)	3.27 րոպե
Linear Regression	3.99 րոպե
Decision Tree(criterion = “MAE – Mean Absolute Error”, Max – depth = 4)	4.27 րոպե

Ընդհանրացման կամ թեստային շեղումը (Test Error) ցույց է տալիս մոդելի կանխատեսման և իրական արդյունքների միջև տարբերությունը: Այլ կերպ ասած, ETA-Jam-ի մեր կանխատեսված արդյունքները շեղվում են իրական (Yandex Map-ի) արդյունքներից ըստ Աղյուսակի 1.-ի: Որպես կորստի կամ նպատակային ֆունկցիա ընտրվել է արմատային միջին քառակուսային շեղման ֆունկցիան (RMSE), քանի որ տրանսպորտային խնդիրների հետ աշխատելիս ամենալավ արդյունքները ստացվել են այս ֆունկցիայի միջոցով:

$$RMSE(\theta, X, y) = \sqrt{\frac{\sum_{i=1}^{10,050}(\hat{y}-y)^2}{10,050}},$$

որտեղ θ-ն մոդելի պարամետրերն են:

Ի համեմատ Աղյուսակի 1-ի դիտարկված այլ մեթոդների՝ հարաբերական արդյունավետ ցուցանիշներ են ստացվել SVM-ի միջոցով կառուցված մոդելի միջոցով, որի շեղումը 3,13 րոպե է: Արդյունքները մեկնաբանենք կամայական երթուղու օրինակով.



Նկար 3. Կամայական երթուղու օրինակ (Հայ-ռուսական համալսարանից Երևանի պետական համալսարանի 6-րդ մասնաշենք). Երթուղու երկարությունը 5400 մ է, Շաբաթվա օրը՝ չորեքշաբթի, Ժամը՝ 12:45, Yandex-ի կանխատեսում(խցանումների դեպքում)՝ 13 րոպե, առանց խցանումների՝ 9 րոպե, ***SVM կանխատեսում՝ 11.42 րոպե, Polynomial Regression կանխատեսում՝ 11.27 րոպե, Simple Decision Tree կանխատեսում՝ 9.52 րոպե:***

Նկար 3-ում ցույց է տրված կամայական երթուղի, որը սկսվում է Հայ-Ռուսական համալսարանից և ավարտվում է Երևանի պետական համալսա-րանի 6-րդ մասնաշենքի մոտ: Երթուղու անցման ժամանակի կանխատեսու-մը[2]՝ ըստ SVM-ի, 11.42 րոպե է, ըստ Polynomial Regression-ի՝ 11.27 րոպե, իսկ ըստ Simple Decision Tree-ի՝ 9.52 րոպե:

[2] Մոդելների հիպերպարամետրերը կարիք ունեն «բարելավման» (tuning) Validation test-ի միջոցով:

Եզրակացություններ. տրանսպորտային համակարգի բարելավման համար ներդրված մոդելը նպատակաուղղված է առկա խնդիրներին լուծում տալուն: Աշխատությունում ներկայացված մոդելը իրականացնում է կամայական երթուղին անցնելու ժամանակահատվածի կանխատեսում, որի հաշվարկման հիմքում ընկած է աջակցող վեկտորների մեթոդը: Մոդելի կանխատեսումը Yandex-ի իրականացրած կանխատեսումից տարբերվում է միջինում 3,13 րոպեով, որը դիտարկված այլ մեթոդների համեմատ ավելի լավ արդյունք է տվել: Կառուցված մոդելը հնարավորություն կտա Երևան քաղաքի մունիցիպալ կառավարման մարմիններին ավելի ճիշտ համակարգել նոր ավտոբուսային համակարգի ներդրման գործընթացը: Մյուս կողմից ժամանակի ճիշտ կառավարումը կարժանանա հանրության գոհունակությանը, քանի որ նույնիսկ «ուշանալու» պարագայում մարդիկ կիմանան, թե ինչքան են ուշանում: Մյուս խնդիրը, որը հնարավոր է լուծել այս մոդելի միջոցով, ճանապարհային լուսացույցերի կառավարումն է, որը նույնպես կնվազեցնի խցանումները Երևանում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Cortes, C. and Vapnik, V. (1995).* Support vector networks. Machine Learning, 20, 273–297.
2. *Boser, B.E., Guyon, I.M. and Vapnik V.N.* (1992). A training algorithm for optimal margin classifiers. In COLT ’92: Proceedings of the fifth annual workshop on Computational learning theory, New York, NY, USA, ACM. PP. 144–152.
3. *Smola, A. J., Scholkopf, B. (1998),* A Tutorial on Support Vector Regression, NeuroCOLT2 Techincal Report Series, 3–16.
4. *Winston, P.* 6.034 Artificial Intelligence. Fall 2010. Massachusetts Institute of Technology: MIT Open Course Ware, https: //ocw.mit.edu. License: Creative Commons BY-NC-SA.
5. *Hastie, T., Tibshirani, R. and Friedman, J. (2001).* The Elements of Statistical Learning: Data minig, Inference and Prediction. Springer Series in Statistics. Springer Verlag.
6. *Wu, L., Fisch, A., Chopra, S., Adams, K., Bordes, A., and Weston, J.* Facebook AI Research, StarSpace: Embed All The Things! arXiv:1709.03856v5.

ПРОГНОЗ ОЦЕНОЧНОГО ПРИБЫТИЯ С ИСПОЛЬЗОВАНИЕМ МЕТОДА ОПОРНЫХ ВЕКТОРОВ

Р.А. Геворгян, Т.С. Карамян

АННОТАЦИЯ

Одним из ключевых направлений стратегического развития Еревана является транспорт, который оказывает значительное влияние на качество воздуха, экономический рост и социальную интеграцию. Транспортные услуги населению Еревана оказывают автобусы, микроавтобусы, троллейбусы и метро. В систему общественного транспорта входят «Ереванский метрополитен имени Карена Демирчяна», «Ереванский электротранспорт», «Ереванский автобус», ЗАО «ЕреванТранс» и 53 частные компании, которые обеспечивают регулярные пассажирские перевозки на пригородных автобусах и микроавтобусах на договорной основе. Городской автобусный и микроавтобусный комплексы состоят из 668 автобусов и около 1400 микроавтобусов различных типов, для которых существует 46 (фактически 41) автобусных и 68 (фактически 72) микроавтобусных сетей. В последние годы количество микроавтобусов значительно сократилось (примерно на 1200), поскольку пассажиропоток сократился, хотя этот вид транспорта считается самым популярным в Ереване. На данный момент оптимизация общественного транспорта в Ереване идет медленно. Среди проблем в транспортной системе:

- Неэффективная маршрутная сеть: она не соответствует текущим требованиям регулярных пассажирских перевозок столицы;
- Отсутствие единой системы продажи билетов;
- Плохое техническое состояние общественных подвижных средств;
- Большой удельный вес микроавтобусов;
- Недостаточный уровень качества обслуживания пассажиров;
- Неудовлетворительное состояние экономики наземного транспорта;
- Неэффективное расположение остановок общественного транспорта: они не полностью отремонтированы и обставлены;
- Недостаточный уровень транспортных услуг для людей с ограниченными возможностями;
- Экологические проблемы, возникающие при эксплуатации устаревших транспортных средств.

Внедрение новой сети общественного транспорта, запущенной в 2017 году, направлено на модернизацию устаревшего и неэффективного городского комплекса автобусов и микроавтобусов методом поэтапного отказа от микроавтобусов и их заменой городскими автобусами. Целью данной работы является прогнозирование предполагаемого времени прибытия различных транспортных средств при помощи моделей машинного обучения, которые позволят пользователям транспортных услуг

правильно управлять своим временем. В этой статье длина произвольного маршрута в городе Ереван при наличии пробок была оценена с использованием метода опорных векторов. Построенная модель прогнозирует предполагаемое время прибытия при наличии пробок (расчетное время прибытия, далее: ETA, расчетное время прибытия при наличии пробок, далее: ETA-Jam). ETA – это расчетное время прохождения отрезки дороги от точки A до точки B. В качестве базы данных были использованы данные Яндекс-карты. Обратите внимание, что все модели были построены с использованием языка программирования “Phyton”. Сначала на картах Яндекса были сгенерированы случайные точки, и были рассчитаны маршруты, пересекаемые этими точками, а также были рассчитаны протяженности этих маршрутов. После чего, на основе данных Яндекс карт, были взяты ETA и ETA-Jam как целевые значения. Влияние определенных дней недели и определенных часов дня на расчетное время прибытия также принимались во внимание, поскольку некоторые улицы Еревана могут быть в некоторой степени заблокированы в зависимости от дней и часов недели. Данные Яндекса для наших моделей являются тренировочными наборами, то есть модели обучались с этими данными.

	A0	A1	B0	B1	Distance	Weekday	Path	Hour	ETA_JAM
0	44.499901	40.222903	44.541364	40.205605	8400.0	2	տիգրան+պետրոսյանի+փողոց head+northeast turn+le...	17	23.0
1	44.497391	40.220717	44.475111	40.194955	4600.0	2	եղվարդի+խճուղի head+northwest turn+left turn+l...	17	12.0
2	44.499105	40.219701	44.453348	40.178074	8600.0	2	եղվարդի+խճուղի head+southeast turn+right turn+...	17	21.0
3	44.499097	40.223226	44.444760	40.185080	9700.0	2	եղվարդի+խճուղի+անաստաս+միկոյան head+northeast ...	17	22.0
4	44.498239	40.221037	44.513963	40.135939	15900.0	2	հալաբյան+փողոց head+southeast turn+right turn+...	17	41.0

Рис. 1. Пример вводных данных в табличной форме.

На Рис. 1 представлены примеры входных данных, где точки A0, A1 и B0, B1 показывают координаты широты и долготы случайно сгенерированных точек A и B, Distance – это длина маршрута между точками A и B в метрах, Weekday – дни недели, Path – траектория от точки A до точки B, Hour – дни, а ETA – Jam – расчетное время прибытия в случае пробок. Для будних дней были импортированы шесть ложных переменных (dummy variables), каждая из которых соответствует одному дню недели. Значение седьмого дня (седьмое ложное переменное) зависит от предыдущих шести дней. Например, если это не первый, не второй, не третий, не четвертый, не пятый, не шестой день, то это – седьмой день. Дорожные траектории (Path) были отображены с помощью Facebook Starspace (техника – nod to vec), после чего каждая траектория была трансформирована в синтетические векторы, что также использовались в качестве вводных данных для построения модели.

В результате генерации данных мы получили 10 050 путей (140 700 наборов данных), из которых 80% использовались в качестве обучающих наборов, а остальные 20% – в качестве тестовых наборов.

Model	Test RMSE
SVR(Kernel = “Radial Basis Function”, C = 100)	3.13 мин.
Polynomial Regression (Degree = 3)	3.27 мин.
Linear Regression	3.99 мин.
Decision Tree(criterion = “MAE – Mean Absolute Error”, Max – depth = 4)	4.27 мин.

Таб. 1. Среднее тестовые отклонения значений RMSE разных моделей.

Среднее тестовое отклонение показывает разницу между предсказанием модели и фактическими результатами. Другими словами, наши прогнозируемые результаты ETA-Jam отличаются от реальных результатов (Карта Яндекса), как показано в Таблице 1.

Функция среднеквадратичного отклонения (RMSE) была выбрана в качестве функции потерь, потому что наилучшие результаты были получены с помощью этой функции при решении транспортных проблем.

$$RMSE(\theta, X, y) = \sqrt{\frac{\sum_{i=1}^{10,050}(\hat{y}-y)^2}{10,050}},$$

где θ это параметры модели.

По сравнению с другими методами, рассмотренными в Табл. 1, относительно эффективные результаты были получены с использованием модели SVM с среднем отклонением наших результатов от фактических в 3.13 минуты. Результаты рассматриваемой модели актуальны для компаний государственного и частного сектора, работающих в транспортной системе. Построенная модель позволит муниципальным властям Еревана лучше координировать процесс внедрения новой автобусной системы. Правильное управление временем, с другой стороны, повлечет за собой удовлетворение общественности, потому что даже если они «опоздают», люди будут знать, насколько они опоздали. Другая проблема, которая может быть решена с помощью этой модели, управление светофорами, что также снизит пробки в Ереване.

Ключевые слова: машинное обучение, методы опорных векторов, регрессионные модели, транспорт.

ESTIMATED TIME OF ARRIVAL (ETA) PREDICTION WITH SUPPORT VECTOR MACHINES (SVM)

R. Gevorgyan, T. Qaramyan

ABSTRACT

One of the key areas of strategic development in Yerevan is transport, which has a significant impact on air quality, economic growth, and social inclusion. The introduction of a new public transport network launched in 2017 aimed at upgrading the city’s outdated and inefficient bus and minibus complex. The purpose of this work is to predict the estimated time of arrival of different vehicles with machine learning models that would enable transport service users to better manage their time. In this paper, the duration of an arbitrary route in Yerevan (taking into account the time spent in traffic jams) was estimated using Support Vector Machines. The average deviation from the actual route duration is 3.13 minutes. The results of this model are relevant for public and private sector companies operating in the transport system.

Keywords: machine learning, SVM, regression models, transport.

УДК 330

Поступила: 30.09.2019г.
Сдана на рецензию: 02.10.2019г.
Подписана к печати: 20.10.2019г.

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԸ ՈՐՊԵՍ ԳԻՏԵԼԻՔԱՀԵՆՔ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԻՉ ՈՒԺ

Ի.Ա. Արշակյան

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

iza.arshakyan@gmail.com

ԱՄՓՈՓՈՒՄ

Գիտելիքահենք տնտեսությունը ենթադրում է նոր տնտեսակարգ, ուր արագությունը դառնում է չափանիշ: Գիտելիքը, գաղափարները, տեղեկատվությունը և նորաստեղծությունը դառնում են երկրի առաջընթացի շարժիչ ուժ, մրցակցային առավելության ռեսուրսներ: Մարդկային ներուժի հիմնախնդիրը գիտելիքահենք տնտեսության պայմաններում հանդես է գալիս խնդիրների մի շղթայի ձևով, մարդկային ներուժի մեծացումը երկու տեսանկյունից՝ անհատի ու բնակչության ներուժը մարդկային կապիտալի վերածելու համար պայմանների ստեղծում և այդ շղթայի գործադրումը գիտելիքահենք տնտեսության համատեքստում:

Հիմնաբառեր՝ մարդկային կապիտալ, գիտելիքահենք տնտեսություն, ներուժ:

Գիտելիքը դարձել է աշխարհի բազմաթիվ երկրների տնտեսական զարգացման հիմնական աղբյուրը՝ հնարավորություն տալով օրեցօր բարելավելու մարդկանց կյանքը: Գիտելիքի հասարակությունների ձևավորմամբ բացվել են նոր հեռանկարներ մարդկանց ինքնազարգացման ու ինքնադրսևորման համար, որտեղ մարդկային ներուժը դարձել է երկրների կայուն առաջընթացի գործոն, իսկ մասնավորապես գիտելիքը՝ գլխավոր ստեղծարար ուժ:

«Մարդը շատ երկար ժամանակ ... իր ֆիզիկական գոյության միջոցների հայթայթման բնույթով չի տարբերվել կենդանական աշխարհի մյուս ներկայա-ցուցիչներից, որովհետև զբաղվել է բնության տված պատրաստի նյութերի հավաքչությամբ և յուրացմամբ: Բայց հետագայում՝ էվոլյուցիոն զարգացման գործընթացում, երբ մարդը ձեռք է բերում բանականության տարրեր, աստիճանաբար մի կողմից կատարելագործում է հավաքչության մեթոդները, իսկ մյուս կողմից զբաղվում է իր գոյության նյութական միջոցների վերարտադրությամբ ... նրա գործունեությունն աստիճանաբար բնազդից անցում է կատարում բանականի՝ ուղեղի թելադրանքի ...» [1]:

Կարելի է ենթադրել, որ ընդհանուր առմամբ մարդկային հասարակության զարգացման վաղ փուլերում սահմանափակ ու պարզունակ գիտելիքների զարգացումը համամեմատաբար դանդաղ է ընթացել: «Հազարավոր տարիներ մարդկությունն ապրել է այնպիսի կյանքով, երբ մի սերնդի կենցաղը, նյութական բարեկեցության մակարդակը, աշխատանքի արտադրողականությունը քիչ է տարբերվել նախորդ սերունդներինից» [2]:

Սակայն, գնալով էլ ավելի են ընդլայնվում գիտելիքի ստեղծման և կիրառության սահմանները՝ դյուրացնելով ոչ միայն մարդկանց կենսապահովման միջոցների ստեղծման գործընթացը, այլև հիմք դնում հոգևոր բարիքների արտադրության, այսինքն՝ մարդկային գործունեության մի նոր ոլորտի առաջացման համար:

Զարգացած աշխարհում ընթանում են այնպիսի փոփոխություններ, որոնք լուրջ մարտահրավերներ են նետել բոլոր երկրներին: Դրանց արագացում է հաղոր-դում համաշխարհային մասշտաբով գիտելիքի զանգվածային արտադրությունը:

Գերխնդիրը ոչ միայն այդ գործընթացներից ետ չմնալն է, այլև դրանց գործուն մասնակիցը դառնալն ու այդ հենքի վրա առաջացող մարտահրավերներին պատասխանելը, հնարավորություններից օգտվելը: Իսկ այդ գերխնդրի լուծման բանալին գտնվում է երկրի մարդկային ու մտավոր ներուժի մեծացմանը և դրանց արդյունավետ օգտագործմանը նպաստող համակարգերի ձևավորման հարթությունում: Խոսքը վերաբերում է նոր հայրուրամյակի նոր երևույթին՝ գիտելիքի տնտեսությանն ու հասարակությանը, որոնք արդեն իսկ իրականություն են դարձել զարգացած երկրներում՝ կառուցելով սոցիալական միասնության վրա հիմնված հասարակություն և

մրցունակ տնտեսություն, որով այդ երկրները դարձել են առավել կենսունակ ու գրավիչ՝ ապրելու և աշխատելու համար:

Գիտելիքահենք տնտեսությունը ենթադրում է նոր տնտեսակարգ, ուր արագությունը դառնում է չափանիշ:

Կոշտ մրցակցությունը հանգեցնում է նորաստեղծության և տեխնոլոգիահենք արտադրանքի ու ծառայությունների ծավալների մեծացմանը, կրճատում է դրանց շուկայական ներկայացման պարբերաշրջանը: Նորույթները ներդնելու և արագորեն շուկա հասցնելու ունակությունը դառնում է վճռորոշ՝ մրցակցային առավելության համար:

Ի տարբերություն ավանդականի՝ գիտելիքահենք տնտեսությունում տնտեսա-կան շրջանառության մեջ են ներգրավվում ոչ նյութական տարբեր օբյեկտներ, հասկացություններ, որոնցից շատերն ուսումնասիրվել են գիտության այլ ճյուղերի շրջանակներում: Դրանցից յուրաքանչյուրն ունի որոշակի իմաստ, որի ըմբռնելն էական է ինչպես իմացաբանական, այնպես էլ այդպիսի տնտեսություն կառուցելուն ուղղված քաղաքականությունների հասցեավորման տեսանկյունից: Այս առումով կարևորվում է նաև դրանց միջև համակարգային կապերի բացահայտումը:

Գիտելիքահենք տնտեսությունում գիտելիքը, գաղափարները, տեղեկատվու-թյունը և նորաստեղծությունը դառնում են երկրի առաջընթացի, նրա սոցիալական, տնտեսական, տեխնոլոգիական և մշակութային վերափոխման շարժիչ ուժ, աշխատատեղերի և հարստության ստեղծման ու արժանապատիվ կյանքի չափորոշիչների ապահովման վճռորոշ գործոն, մրցակցային առավելության ռեսուրսներ [3]:

Ներկայումս տնտեսագիտական շրջանակները ֆիզիկական կապիտալին (սարքավորումներ, գործարաններ, օֆիսային շինությունները և այլն) զուգահեռ՝ որպես որակավորված աշխատողների համախումբ, շեշտադրում են մարդկային կապիտալը: Որակավորված աշխատողներով տնտեսությունն ավելի արտադրո-ղական է, քան այն տնտեսությունը, որտեղ աշխատողները չգիտեն կարդալ և գրել:

Վերջին երկու հարյուրամյակների ընթացքում մարդկային կապիտալի աճը եղել է շարունակական և նույնքան նշանակալի, որքան ֆիզիկական կապիտալինը: Դեռևս առաջին արդյունաբերական հեղաշրջման փուլում ներկայիս Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակեր-

պության (ՏՀԶԿ)[1] երկրների բնակչության միայն 30 տոկոսն ուներ ընդհանուր զրագիտություն: Այսօր այդ ցուցանիշը կազմում է 95 տոկոս: Նշենք որ մինչ առաջին արդյունաբերական հեղաշրջում դրպրոցական կրթությունը պարտադիր չէր, իսկ այսօր այն պարտադիր է գոնե մինչև 16 տարեկանը: Դեռ պահպանվում են մեծ տարբերու-թյուններ երկրների միջև: Ներկայում ՏՀԶԿ երկրներում բնակչության գրեթե 100 տոկոսը ստանում է տարրական կրթություն, 90 տոկոսը՝ միջնակարգ և 38 տոկոսը՝ բարձրագույն [4]:

Ժամանակակից տնտեսագետ Օ. Բլանշարը հիմնավորելու համար այն պնդումը, որ որակավորված աշխատողներով տնտեսությունն ավելի արտադրո-ղական է, փոփոխության է ենթարկել արտադրական ֆունկցիան՝ տնտեսական մոդել ներմուծելով մարդկային կապիտալ էկզոգեն փոփոխականը:

Ֆունկցիա 1. Փոփոխված արտադրական ֆունկցիա:

$$\frac{Y}{N} = f\left(\frac{K}{N}, \frac{H}{N}\right)$$

(+ , +)

Մեկ աշխատողին բաժին ընկնող ՀՆԱ-ն կախված է մեկ աշխատողին բաժին ընկնող ֆիզիկական կապիտալի քանակից՝ K/N, և մեկ աշխատողին բաժին ընկնող մարդկային կապիտալից՝ H/N: Ինչպես և նախկինում մեկ աշխատողին բաժին ընկնող ֆիզիկական կապիտալի աճը (K/N) բերում է մեկ աշխատողին բաժին ընկնող ՀՆԱ աճի: Իսկ միջին որակավորման մակարդակի աճը՝ H/N, բերում է մեկ աշխատողին բաժին ընկնող ավելի մեծ ՀՆԱ-ի: Առավել որակավորված աշխատողները կարող են իրացնել առավել բարդ սարքավորումներ, կարող են ավելի հեշտ լուծել անսպասելի առաջադրանքները և ճկուն են ցանկացած նոր իրավիճակներում [5]:

Փաստորեն ըստ Բլանշարի՝ տնտեսագետների կողմից ավելի վաղ արված ենթադրություններն այն մասին, որ մեկ աշխատողի հաշվով ֆիզիկական կապիտալի աճն ավելացնում է մեկ աշխատողի հաշվով ՀՆԱ-ն (բայց

[1] ՏՀԶԿ-ն պաշտոնապես հիմնադրվել է 30 Սեպտեմբեր 1961թ.: Այսօր կազմակերպությունը ընդգրկում է 36 երկիր: Հայաստանը կամակերպությունում ընդգրկված չէ: Աղբյուր՝ http://www.oecd.org/about/history/

այդ ազդեցությունը փոքրանում է մեկ աշխատողին բաժին ընկնող ֆիզիկական կապիտալի աճին զուգընթաց) կարելի է վերագրել նաև մեկ աշխատողին բաժին ընկնող մարդկային կապիտալի աճին:

Արդյունքում մեկ աշխատողին բաժին ընկնող ՀՆԱ-ի աճ ունենալու համար ներկայում պարտադիր է դառնում որակավորված մարդկային կապիտալի առկայությունը, որն էլ հանգեցնում է երկրների միջև կենսամակարդակների տարբերության:

Ֆիզիկական և մարդկային կապիտալների տարբերություններով բնութագրվող կենսամակարդակների տարբերությունը ավելի ակնհայտ տեսնելու համար բերվել են ՏՀԶԿ երկրների ցանկից մեկ շնչին ընկնող ՀՆԱ (ըստ գնողունակության համարժեքության) ամենաբարձր ցուցանիշը ունեցող առաջին երեք երկրները, ամենացածր ցուցանիշը ունեցող վերջին երեք երկրները և Հայաստանը:

Աղյուսակ 1.

Մեկ շնչին ընկնող գնողունակության համարժեքությամբ (PPP) ՀՆԱ՝ հաշվարկված միջազգային դոլարներով [6]:

	Լյուքսեմբուրգ	Իռլանդիա	Նորվեգիա	Թուրքիա	Չիլի	Մեքսիկա	Հայաստան
2016թ.	95,764.548	62,777.806	64,729.326	23,168.705	22,260.075	17,941.015	8,014.463
2017թ.	95,572.738	66,547.667	65,495.952	23,168.705	22,352.511	18,122.777	8,613.141
2018թ.	97,002.011	68,994.730	66,017.518	25,112.658	22,999.287	18,339.068	9,126.550

Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն և առհասարակ կենսամակարդակը բարձրացնելու գործում հիմնարար է մարդկային ներուժի զարգացումը: Միաժամանակ, մարդկանց ընդհանուր զարգացման համատեքստում կարևորվում է այն, թե ինչ որոշակի գիտելիքների ու հմտությունների կամ գիտելիքի կապիտալի է տիրապետում մարդը, որը հնարավորություն կտա նրան ոչ միայն բավարարել սեփական պահանջմունքները, այլև ստեղծել որոշակի

նյութական և հոգևոր բարիքներ՝ հասարակության մյուս անդամների պահանջմունքները բավարարելու համար:

Նոբելյան մրցանակի դափնեկիր Ջոզեֆ Ստիգլիցը համարում է, որ գիտելիքի տնտեսության հաջողության բանալին մարդկային կապիտալն է՝ ուսումնառած և մշտապես ուսումնառող աշխատուժը: Պատահական չէ, որ շատ երկրներ ուշադրությունը կենտրոնացրել են իրենց կրթական համակարգերի բարելավմանը: Պրոֆեսոր Վ. Շչետինինը նկատել է, որ բազմաթիվ կարծիքներում մարդկային կապիտալ է հասկացվում աշխատողի կուտակած գիտակրթական ներուժը, գիտելիքի և կարողությունների նրա պաշարները, այսինքն՝ ժամանակակից աշխատուժը [7]: Ըստ էության, խոսքը վերաբերում է ժամանակակից մարդկային ներուժին: Այդպիսի ներուժի բնականոն վերարտադրության համար ձեռնարկատերերը և պետությունը պետք է առանձնացնեն կապիտալի համապատասխան զանգված: Դրա համար էլ մեզ մոտ մարդկային ներուժը հանդես է գալիս արտադրության գործընթացում երբևէ մարդկային կապիտալ դառնալու լոկ ինչ-որ հնարավորություն: Փաստորեն, մարդկային ներուժը կարող է վերածվել մարդկային կապիտալի՝ միայն վարձու աշխատանքային հարաբերությունների ոլորտ մուտք գործելով:

Մարմնավորված վիճակում մարդկային կապիտալն իրենից ներկայացնում է կուտակված մասնագիտական գիտելիքների, հմտությունների և ունակությունների ամբողջություն, որը ստացվում է կրթության և որակավորման բարձրացման գործընթացում, որոնք էլ հետագայում կարող են բերել եկամուտ՝ աշխատավարձի, տոկոսադրույքի կամ շահույթի ձևով: Մարդկային կապիտալի դեպքում խոսքը վերաբերում է ռեֆլեքսային գիտելիքին, որն ունի տրամաբանական կառուցվածք: Առարկայացած վիճակում այդ կապիտալը գոյություն ունի ուսուցանող տեքստերի և պրակտիկաների ձևով, որոնք կոչված են վերահաղորդելու հատուկ գիտելիքները և ցուցադրելու նոր հմտությունների ստեղծման ընթացակարգերը:

Ինստիտուցիոնալ վիճակում մարդկային կապիտալն ամրացվում է ֆորմալ հավաստագրերի համակարգով, որը ներառում է դիպլոմները, կարգերը, լիցենզիաները, որոնցով և ստացած գիտելիքների ու հմտությունների մասին վկայող արտոնագրերը:

Ընդ որում, հաճախ այդ հավաստագրերը հնարավորություն են տալիս զբաղվելու գործունեության որոշակի տեսակներով, օրինակ, փաստաբանությամբ, բժշկական պրակտիկայով և այլն: Այսպիսով, մարդկային կապիտալի կուտակման համար պահանջվում է մտավոր ունակությունների և գործնական հմտությունների որոշակի ներուժ, որը զարգացվում է կրթության և գործունեության ընթացքում: Ներուժի և կապիտալի համեմատության ժամանակ առանձնացվում է երկու սկզբունք.

Առաջին՝ նկատի են առնվում ներուժի այն հատկանիշները, որոնք կարող են օգտագործվել աշխատանքի գործընթացում: Օրինակ, ներդրումների արդյունքում ձևավորված և մարդու կողմից կուտակված առողջության, գիտելիք-ների, հմտությունների, ունակությունների, դրդապատճառների պաշարը, որն օգտագործվում է հասարակական վերարտադրության այս կամ այն ոլորտում, նպաստում է աշխատանքի արտադրողականության և արտադրության արդյու-նավետության աճին և դրանով ներազդում է տվյալ մարդու եկամուտների վրա:

Երկրորդ՝ մարդկային կապիտալը, ինչպես և ցանկացած այլ կապիտալ, պետք է ունենա վերարտադրվելու հնարավորություն, այսինքն՝ դրա ստեղծման համար կատարված ծախսերը պետք է բերեն նաև մեծ եկամուտներ:

Այսպիսով, մարդկային ներուժի հիմնախնդիրը գիտելիքահենք տնտեսության պայմաններում հանդես է գալիս խնդիրների մի շղթայի ձևով, մարդկային ներուժի մեծացումը երկու տեսանկյունից՝ անհատի և բնակչության ներուժը մարդկային կապիտալի վերածելու համար պայմանների ստեղծում և այդ շղթայի գործադրումը գիտելիքահենք տնտեսության համատեքստում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Քոթանյան Մ.* Շուկայական էկոնոմիկա, Եր. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ. 1998: էջ. 10–11:
2. *Булатова А.С.* Экономика: учебник. 4-е изд., М., Экономист, 2006. С. 293.
3. *Վարդանյան Գ.* Գիտելիքահենք տնտեսություն, Եր., 2008, էջ 391:
4. *Бланшар О.* Макроэкономика / Пер. с английского под научной редакцией Л.Л. Любимова, Издателский дом Государственного университета – Высшей школы экономики, М., 2010. С. 252.
5. Там же. С. 252.

6. https://www.imf.org/external/pubs/ft/weo/2018/02/weodata/index.aspx
7. *Щетинин В.П.* Человеческий и вещественный капитал – общность и отличие. Альманах «Восток», № 2 (14), февраль 2004, (http://www.situation.ru).
8. http://www.oecd.org

ЧЕЛОВЕЧЕСКИЙ КАПИТАЛ КАК ДВИЖУЩАЯ СИЛА ЭКОНОМИКИ ЗНАНИЙ

И.А. Аршакян

АННОТАЦИЯ

Знания стали основным источником экономического развития многих стран мира, позволяя людям ежедневно улучшать свою жизнь. Создание общества знаний открыло новые перспективы для саморазвития и самовыражения людей, где человеческий потенциал стал фактором устойчивого развития стран, и, в частности, знания стали основной творческой силой.

Можно предположить, что развитие ограниченных и примитивных знаний, как правило, было относительно медленным на ранних этапах развития человеческого общества. «В течение тысячелетий человечество проживало жизнь, где средства к существованию, уровень материального благосостояния и производительность труда одного поколения мало отличались от уровня жизни предыдущих поколений».

Однако все больше расширяются границы создания и применения знаний. В развитом мире происходят изменения, которые бросили вызов всем странам. Им придает ускорение массовое производство знаний в мировом масштабе.

Տաբուբառերը չափազանց հետաքրքիրեն, թվում է՝ նրանք ունեն մոգական և ազդեցիկ ուժ: Մարդիկ այն չեն արտաբերում այնպես, ինչպես մյուս բառերը. հնչերանգային տատանումները, ձայնի ելևէջումները, տոների բարձրացումները և իջեցումները, ձայնալարերի դողը շեշտում են տաբուների տարբերակումը բառային մյուս միավորներից: Մարդիկ ունեն շատ խիստ վերաբերմունք դրանց նկատմամբ. սրտի աշխատանքն արագանում է, արյանճնշումը՝բարձրանում, մարմինը՝փշաքաղվում: Խոսքը հատկապես վերաբերում է հայհոյաբանություններին, որոնք արտաբերելիս թե՛ խոսողը, թե՛ լսողը կարող են հայտնվել հոգեբանական այնպիսի ցայտնոտի մեջ, որում առկա է հույզը, զարմանքը, ամոթը, ապշանքը, տարակուսանքը: Ըստ ամենայնի, տաբուի գազաթնակետն այն արտաբերելն է, իսկ տաբուի ընկալելը՝ պարտադրված անխուսափելիություն: Ինչպես մեր հետազոտությունները են ցույց տալիս, անգլերենի բազմաթիվ տաբուներ ունեն հենց այսպիսի բնույթ. նրանք սովորական իմաստով գործածվելիս ունեն չեզոք հնչերանգ ու

արտաբերում, իսկ տաբուի իմաստով գործածվելիս լարվածությունը մեծանում է, այն է՝ ***ball, beaver, butt, BS, dyke, bugger, cock, knob, root, screw, shag, jugs, snatch, spade, tool*** և այլն:

Տաբուի և տաբու արտահայտությունների էմոցիոնալ որակների մասին կատարվել են և կատարվում են բազմաթիվ լեզվական հետազոտություններ: Դրանք ցույց են տալիս, որ արգելված բառերն ավելի հնչեղ են, ավելի շոկային, ավելի հիշվող ու տպավորիչ, քան մյուս լեզվական միավորները: 1957 թվականին Չարլզ Օսգուտը և նրա գործընկերներն առաջ են բերում լեզվաբանական մի կանխադրույթ: Խոսքը իմաստային տարբերակման մասին է՝ ուղղված բառերի կոնոտատիվ իմաստների համակարգմանը և խմբավորմանը: Իրենց կանխադրույթները հիմնավորելու համար նրանք կատարում են սոցոլոգիական հարցում և բառերը դասակարգում են ըստ վերաբերմունքային երեք չափանիշների: Դրանք են՝ 1. գնահատում (բառը վա՞տ է, թե՞ լավ), 2. գործածման ակտիվությունը (բառը ակտի՞վ է, թե՞ պասիվ), 3. արտահայտչականության հզորությունը (բառը ուժե՞ղ է, թե՞ թույլ): Հետազոտության արդյունքները հաստատում են այն ընդհանուր միտումը և կանխադրույթը, որ լեզվում ցանկացած տհաճ և բացասական կոնոտացիա կամ դոնոտացիա ունեցող միավոր գերիշխող է ցանկացած իրավիճակում [18, 19]:

Նույնքան հետաքրքրական է երկլեզու մարդկանց խոսքում տաբուների գործածության ուսումնասիրությունը: Այս մարդիկ երկրորդ լեզուն սովորել են ավելի հասուն տարիքում: Նրանց լեզվում բացակայում է տաբու բառերի արգելված լինելու մշակութային կնիքը, այսինքն՝ անկաշկանդորեն կարող են գործածել ձեռք բերած երկրորդ լեզվի տաբուները: Այս դեպքում այդ բառերն ունեն բացարձակ այլ նյարդաբանական դրսևրումներ: Շատ հաճախ մարդիկ այդ տաբուները հանգիստ ու անվրդով արտաբերում են օտար լեզվով, բայց այդ նույն բառի համարժեքը երբեք չեն արտաբերում իրենց մայրենի լեզվով թիրախային որոշակի խմբերում: Այդ իսկ պատճառով երբեմն օտար բառերն են դառնում էֆեմիզմներ մայրենի լեզվի տաբուների համար: Օրինակ՝ հայերենում սովորական երևույթ է, երբ առանց որևէ նյարդաբանական և էմոցիոնալ դրսևորումների ռուսերեն *туалет* բառը գործածվում է *զուգարան* բառի փոխարեն, կամ անգլերեն *fuck, shit* բառերի որոշակի հաճախականությամբգործածությունը, մինչդեռ այս բառերի հայերեն տարբերակները խիստ սահմանափակ են կիրառվում և ազատ ու համատարած

գործածություն չունեն: Հայերենի կենդանի մի շարք բարբառներում *զուգարանի թուղթ* հասկացության գործածումը տաբու է, որից խուսափելու համար գործածում են հայերեն *թուղթ*, ռուսերեն *бумага* բառերը:

Նյարդաբանական և նյարդալեզվաբանական հետազոտությունները ցույց են տալիս, որ լեզուն ձևավորվում է ուղեղի որոշակի հատվածում, որը պատասխանատու է մարդկային խոսքի համար, իսկ արգելաբառերն առաջանում են ուղեղի մեկ այլ, չորոշակիացված հատվածում, որը պատասխանատու է մեր հույզերի և էմոցիաների համար: Մարդիկ գլխուղեղի կեղևի որոշակի բաժինների ախտահարման պատճառով կարող են տառապել աֆազիայով (խոսելու ընդունակության լրիվ կամ մասնակի կորուստ): Այսպիսի ախտանիշ ունեցող մարդիկ երբեմն, շատ ազատ արտաբերում են տաբու բառեր՝ անեծքներ, հայհոյանքներ: Մինչդեռ երբ տաբուն հնչեցնելուց անմիջապես հետո նրանց խնդրեն կրկնել նույնը, նրանք այլևս չեն կարող բնականորեն անել այդ:Այս երևույթը հաստատում է այն կանխադրույթը, որտաբուբառերըձևավորվումենգլխուղեղիայնմասում, որը պատասխանատու է էմոցիաների և հույզերի արտահայտման համար, իսկ խոսքը ձևավորվում է ուղեղի մեկ այլ հատվածում: Ըստ կատարված հետազոտությունների՝ ուղեղի կաթված ստանալու պատճառով խոսելու ունակությունը կորցրած հիվանդների մոտ վնասվում է ուղեղի այն կիսագունդը, որը պատասխանատու է խոսքի ձևավորման համար: Այս մարդիկորոշակի էմոցիոնալ վիճակներում հայհոյում են, անիծում կամ օգտագործում որոշակի արգելաբառեր [20]:

Բնորոշ լինելով բոլոր լեզուներին և հասարակություններին՝ տաբուների ուսումնասիրության կարևորությունը պետք է տեսնել վերոնշյալ վերլուծություններում: Արևմտյան բազմաթիվ գիտական կենտրոններ տաբուի վերաբերյալ կատարել են տարաբնույթ հետազոտություններ, սակայն դրանց հիմքում եղել են երևույթի հասարակական, մշակութային և բարոյագիտական տեսանկյունները: Օրինակ՝ *Forbidden Words, Taboo and the Censoring of Language* (2006) աշխատության մեջ հեղինակները ներկայացում են տաբու համարվող բառերի քննությունը, դասակարգումը և գործածությունը խոսքի մեջ, նրանց հանրաբանական արժեքը և դերն առօրյա կյանքում: Մեր դիտարկած մի շարք գիտական հոդվածներում (Nadia Ghounane, A Sociolinguistic View of Linguistic Taboos and Euphemistic Strategies in The Algerian Society: Attitudes and Beliefs in Tlemcen Speech Community, 2014; Timothy Jay, The Utility and Ubiquity of Taboo Words, 2009; Chunming Gao, A Sociolinguistic

Study of English Taboo Language, 2013; Muhammad Kamal Khan and Azhar Parvaiz, A Descriptive Analysis of Diminishing Linguistic Taboos in Pakistan; 2013 և այլն) նույնպես տաբուն բնութագրվում է որպես հանրաբանության, մշակութաբանության և բարոյագիտության քննության առարկա և բացակայում է տաբուի լեզվական մասի քննությունը: Ըստ ամենայնի, տաբուների լեզվական քննությունը լեզվաբանական ուղղությունների և հոսանքների շրջանակներից դուրս է եղել: Տաբուների լեզվական քննությունկատարելու նախադրյալներ չեն եղել, քանի որ տաբու բառերը հստակորեն չեն տարանջատվել իմաստաթեմատիկ մյուս բառաշերտերից: Սրա պատճառն այն է, որ տաբուները լեզվական որոշակի գիտելիքների շրջանակի մեջ չեն սահմանափակվում, այլ ընդգրկում են կյանքի բոլոր բնագավառները՝ վերաճելով բարդ լեզվամշակութային միավորների:

Հայերենի քերականության մեջ տաբուին վերաբերող խնդիրների քննությունն ինքնին «տաբու» է եղել. որևէ ամբողջական աշխատանք այս թեմայով կատարված չկա մինչ օրս՝ ո՛չ հասարակական, մշակութային և բարոյագիտական չափանիշներով, ո՛չ լեզվական: Հայ լեզվաբանության մեջ տաբուին վերաբերող դիտարկումները գրեթե ակնարկային բնույթ ունեն, ներկայանում են հակիրճ ու սահմանափակ վերլուծություններով՝ բացառապես ներկայացվելով ուսումնամեթոդական դասագրքերում և ձեռնարկներում բառապաշարի իմաստաթեմատիկ խմբերը բնութագրելիս: Էդ. Աղայանը հակիրճ տալիս է տաբուի լեվաբանական բնութագիրը և սահմանումը՝ բերելով համապատասխան լեզվական օրինակներ ինչպես հայերենից, այնպես էլ հայերենին ցեղակից ու ոչ ցեղակից լեզուներից՝ «Էվֆեմիզմի մի ուրիշ տեսակը պետք է համարել այսպես կոչված տաբուն, երբ զանազան նախապաշարումների, սնոտիապաշտությունների և և կրոնական հավատալիքների շնորհիվ խուսափում են որոշ առարկաների անունները տալուց և նրանց մասին խոսելիս այլևայլ արտահայտություններ են գործածում», կամ՝ «Տաբուն ընդհանուր առմամբ ավելի մեծ տարածում ունի զարգացման ցածր մակարդակի վրա գտնվող ցեղերի ու ժողովուրդների լեզուներում, որոնց մեջ նա տարբեր էլ դրսևորումներ ունի» [21]:

Բանագետ Ս. Հարությունյանը, ուսումնասիրելով անեծքներն ու օրհնանքները, ներկայացնում է դրանց ավանդական ըմբռնումներն ու կիրառությունը, ինչպես նաև նրանց տիպաբանությունը: Այստեղ լեզվական հարցերն

առանցքային նշանակություն չունեն, հիշատակվում են ըստ անհրաժեշտության: Հակադրելով հայհոյանքները երդումներին՝ Ս. Հարությունյանը կարնորում է, որ հայհոյանքները սոսկ մարդկային ջղագրգիռ հոգեվիճակների բանավար արտահայտություններ են և այլ գործնական կիրառություն չունեն: Նա գրում է. «Հայհոյողը շահագրգռված է միայն անպատվել դիմացինի այն ամենը, ինչ թանկագին ու սուրբ է գիտակցվում»կամ «…հիշոց-հայհոյանքներն ու փաղաքշական խոսքերը զուրկ են հմայական ներգործության զորությունից. դրանց իրագործմանը ո՛չ ասացողներն են հավատում, ո՛չ էլ ենթակա լսողները. դրանք թողնում են սոսկ տհաճ կամ հաճելի տպավորություն» [22]:

Որպես ամփոփումկարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները՝

1. Տաբուները վերարտադրում են հաղորդակցության գործընթացում մարդու հոգեկերտվածքի էմոցիոնալ և հուզական դաշտի առանձին նրբերանգները:

2. Տաբուները՝ որպես լեզվի բացասական դրսևորումներ, ունեն ծագումնաբանական, հանրալեզվաբանական և ազգալեզվաբանական տարբեր պատճառաբանվածություններ:

3. Տաբուբացահայտելը և նրա առանձնահատկությունները ճանաչողական տեսանկյունից նկարագրելը ենթադրում է պարզել տվյալ լեզվական հանրույթի ընդհանուր քաղաքակրթվածության աստիճանը, լեզվի զարգացման գիտակցական ու մտածական մակարդակը և բառիմաստների փոփոխության գործընթացները, ինչպես նաև՝ դրանց պատճառները:

4. Տաբուները լեզվական որոշակի գիտելիքների շրջանակի մեջ չեն սահմանափակվում, այլ ընդգրկում են կյանքի բոլոր բնագավառները: Այս իրողությունը վկայում է, որ տաբուները բարդ լեզվամշակութային միավորներ են և իրենց մեջ ներառում են հոգեմտածական, հոգևոր-նյութական տարբեր լեզվական, բառային շերտեր:

5. Տաբու բառերին բնորոշ են հնչերանգային տատանումները, ձայնի ելևէջումները, տոների բարձրացումներն ու իջեցումները, ձայնալարերի դողը, որոնց շնորհիվ տաբու բառերն ավելի հնչեղ ու շոկային են, ավելի հիշվող ու տպավորիչ, քան մյուս լեզվական միավորները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Langacker R. W.* Cognitive Grammar: A basic introduction, Oxford University Press, 2008.
2. *Lakoff George*. The Political Mind: A Cognitive Scientist's Guide to Your Brain and Its Politics, Published by Penguin Books, 2009.
3. *Vyvyan E. and Melanie G.* Cognitive Linguistics an Introduction, Edinburgh University Press, Edinburgh, 2006.
4. *Демьянков В.З.* Когнитивные аспекты лексикографии, 1994 // URL: http://www.infolex.ru/Cogni.html#_ftnref2 (дата обращения: 08.2018).
5. *Попова З.Д., Стернин И.А.* Когнитивная лингвистика, Учебное издание, М.: АСТ: «Восток-Запад», 2007.
6. *Кибрик А.А., Подлесская В.И.* Рассказы о сновидениях. Корпусное исследование устного русского дискурса. М.: Языки славянской культуры, 2009.
7. *Geeraerts D., Cuyckens. H.* The Oxford Handbook of Cognitive Linguistics. Oxford University Press, New York, 2007.
8. *Lakoff G., Johnson M.* Philosophy In The Flesh: the Embodied Mind and its Challenge to Western Thought, New York: Basic Books, 1999.
9. *Lakoff G.* Women, Fire, and Dangerous Things: What Categories Reveal About the Mind, University of Chicago Press, 1987.
10. *Հովհաննիսյան Գ.* Ճանաչողական լեզվաբանության զարգացման գիտական նախադրյալները Հայաստանում // Լեզու և լեզվաբանություն, Եր. Զանգակ հրատ., 2003 (1), էջ 27:
11. *Sigmund F.* Totem and Taboo, London, Printed in Great Britain by Butler & Tanner, 1919, էջ. 22–39.
12. Online Etymology Dictionary // URL: https://www.etymonline.com/word/taboo/ (Retrieved August 1, 2018).
13. *James C.* 1893. Captain Cook's Journal During his First Voyage round the World made in H.M. Bark Endeavour, 1768–71. A literal transcription of the original MSS ed. Captain W. J.L. Wharton. London: Elliot Stock.
14. *Ghounane Nadia*. A Sociolinguistic View of Linguistic Taboos and Euphemistic Strategies in the Algerian Society: Attitudes And Beliefs in Tlemcen Speech Community // International Journal of Research in Applied, Natural and Social Sciences IMPACT: IJRANSS) ISSN(E): 2321-8851; ISSN(P): 2347–4580 Vol. 2, Issue 3, Mar 2014, 73–88, P. 74.
15. *Sigmund F.* Totem and Taboo, London, Printed in Great Britain by Butler & Tanner, 1919, P. 10.
16. *Radcliffe-Brown.* Taboo. Cambridge: Cambridge University Press, 5f, A. R. 1939.
17. *Keith A.and Burridge K.* Forbidden Words Taboo and the Censoring of Language, Cambridge University Press, 2006. PP. 2–4.

18. Same book, P. 244.
19. *Osgood Ch. E., George J., Tannenbaum S. and Percy H.* The Measure-ment of Meaning. Urbana: University of Illinois Press, 1957.
20. *Keith A. and Burridge K.* Forbidden Words Taboo and the Censoring of Language, Cambridge University Press, 2006, P. 247.
21. *Աղայան Է.* Լեզվաբանության հիմունքներ, Եր.ԵՊՀ հրատ., 1987, էջ. 397, 398:
22. *Հարությունյան Ս.* Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, ՀՀ ԳԱԱ հրատ., Եր., 1975, էջ. 7, 8:

ЛИНГВОКУЛЬТУРНАЯ ЦЕННОСТЬ ТАБУ В КОНТЕКСТЕ КОГНИТИВНОЙ ЛИНГВИСТИКИ

А.А. Погосян

АННОТАЦИЯ

Когнитивная лингвистика, акцентируя внимание на функциональной природе языка, на соотношении формы и структуры, раскрывает взаимосвязи: язык и культура, язык и религия, язык и природа, язык и биология, язык и Вселенная, язык и человек, язык и поведение, язык и время, язык и душа, а также свойственные ей многочисленные познания жизнедеятельности человека, его когнитивные особенности.

С когнитивной точки зрения, по мере развития мышления у человека также параллельно развивается способность контролировать свою речь. Люди учатся отслеживать слова табу с помощью простых процессов нервной системы. Чем цивилизованнее общество, тем лучше работает этот механизм. Люди становятся бдительней к своей речи, обращая внимание на определенные правила вежливости и речевое окружение. Чем нецивилизованней общество, тем больше оно отдает дань предрассудкам, страхам, запретам, и язык, следовательно, начинает обогащаться словами табу и их замещающими эвфемизмами.

Табу (taboo/tabu, табу) – запрещенное слово, укорененное в сознании, оно является хранилищем и базой данных для целенаправленного использования знаний; как система барьеров такие слова широко были распространены в первобытном обществе, и ее отличительные особенности стали предметом когнитивной лингвистики. Практически, во всех народах мира можно найти табу, связанные с человеческой, животной средой, которые показывают субъективные, местные привычки, преобладающие в той или иной культуре.

Слова табу, слова-ограничители в качестве познавательной языковой единицы, появлялись в разговорной речи на протяжении всей истории развития языка. Они

отражают духовную и материальную систему ценностей в языке, менталитет, уровень цивилизованности людей, которые создают и используют табу. По большей части, существование табу в любом языке, в большей или меньшей степени, связано с предрассудками, отдающими дань различным запретам. Они отражают духовные и материальные ценности, менталитет и уровень цивилизованности. Например, в армянской действительности есть обрядовое табу, связанное со значением словарной единицы «красное яблоко»; или в Армении, в домах усопших (умерших) стараются не разговорить громко или совсем не говорят друг с другом.

Слова табу очень интересы. Кажется, что в них есть некая магическая и влиятельная сила. Люди их не так произносят, как другие слова. Отличие проявляется в звуковом аспекте, в интонации голоса (в повышение/понижение тональности), дрожь в голосовых связках, что подчеркивает несхожесть слов табу, их отличие от других выражений. У людей очень строгое отношение к ним: учащается сердцебиение, повышается давление, бегут мурашки по телу. Особенно это касается богохульных слов, произнося которые, говорящий и слушающий может оказаться в психологическом состоянии, где явно начинают проявляться такие эмоции, как удивление, стыд, гнев, недоумение. Во всяком случае, в словах табу пиковая точка – их произнесение, где их восприятие, естественно, неизбежно. Как показывают наши исследования, многочисленные английские табу имеют именно такую структуру. При их обыденном использовании проявляется их нейтральное звучание и воспроизведении, а в качестве табу – напряжение возрастает: ball, beaver, butt, BS, dyke, bugger, cock, knob, root, screw, shag, jugs, snatch, spade, tool и т.д.

В процессе общения табу воспроизводят эмоции, психологическую и ментальную особенность. Табу в качестве отрицательного явления в языке имеют различные социолингвистические, этнолингвистические причины. Выявление табу и их отличительных особенностей предполагает проявление общего уровня цивилизованности данного языкового сообщества, развитие языка и уровень осознанности в языке, причины их образования и становления в языке. Табу не ставят в какие-либо языковые рамки, а включаются в разные аспекты жизни. Данный факт свидетельствует о том, что табу – сложные языковые образования, которые состоят из различных словесных пластов, где отражается разное мышление, разные материальные и психологические явления. В конечном итоге, словам табу свойственно звуковое отличие: в интонационном плане – повышение и понижение голоса; по этой причине слова табу более шокирующие, они наиболее запоминающиеся и впечатляющие, чем другие языковые единицы.

Ключевые слова: познавательная лингвистика, языковое мышление, смысл слова, система запретов, табу.

LINGUO-CULTURAL VALUE OF TABOO WORDS IN THE CONTEXT OF COGNITIVE LINGUISTICS

A. Poghosyan

ABSTRACT

The aim of this research which has been crried out by different linguistic methods is to bring to the light the linguo-cultural peculiarities of taboo words. According to the research taboo words cover all the spheres of life and they are complex linguo-cultural units. The topic is actual as in Armenian linguistics there is no complete study on the topic and this can be considered as the first complete attempt.

Taboo is one of the forms to express the cultural values and national mentality of a society where it is manifested first and foremost through the language. According to the author taboo words, as word units having cognitive value and meaning, express spiritual and materiallinguistic thought, value system, inner world and level of civilization of nations creating and using taboo words. Analyzing works of a number of linguists on taboo words the author concludes that the existence or absence of taboos in any language is conditioned by the tribute to the various prejudices.

Keywords: cognitive linguistics/semantics, language mentality, word meaning, system of prohibitions, taboo.

ЖУРНАЛИСТИКА

УДК 070

Поступила: 11.11.2019г.
Сдана на рецензию: 13.11.2019г.
Подписана к печати: 15.01.2020г.

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՎԱԶԴԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹԻՖԼԻՍԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ (1819–1865թթ.)

Տ.Ռ. Դանիելյան

Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարան

t5plus@yandex.ru

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ուսումնասիրված են մատենագիտական գովազդի զարգացման առանձնահատկությունները Թիֆլիսի պարբերական մամուլում: Համեմատելով Թիֆլիսի և մայրաքաղաքների (Սանկտ Պետերբուրգ ու Մոսկվա) պաշտոնական ու մասնավոր պարբերականների գովազդային գործունեության զարգացման օրինաչափությունները և առանձնահատկությունները՝ հեղինակը նկատում է, որ մինչև 1865թ. Թիֆլիսի մասնավոր պարբերականների հայտարարությունների բաժնում գերակշռող մասը մատենագիտական գովազդն էր, չնայած որոշ մասնավոր պարբերականներ՝ ի տարբերություն մայրաքաղաքներում լույս տեսնող լրագրերի ու ամսագրերի, իրավունք ունեին տպագրելու առևտրային այլ հայտարարություններ: Պաշտոնաթերթերը զարգանում էին գրեթե նույն օրինաչափությամբ. մատենագիտական գովազդն իր տպագրման ծավալով և քանակով զիջում էր պաշտոնական հայտարարություններին ու առևտրային այլ հայտարարություններին:

Հիմնաբառեր՝ Սանկտ Պետերբուրգ, Մոսկվա, պաշտոնաթերթ, գիրք, գրաքննություն:

Ներածություն

Ռուսական կայսրությունում գիրքը՝ որպես գովազդի օբյեկտ, երկար տարիներ գրեթե մենաշնորհային առավելություն ուներ մյուս ապրանքատեսակների նկատմամբ: Այս իրողությունը պայմանավորված էր քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային մի շարք գործոններով, որոնց ազդեցության ներքո էլ ձևավորվում էին գրաքննական սկզբունքները, ու զարգանում էր պարբերական մամուլը: Սակայն պետք է նշենք, որ մայրաքաղաքներում՝ Սանկտ Պետերբուրգում, Մոսկվայում, ու գավառական քաղաքներում լրագրային և գովազդային գործունեության զարգացումը տարբեր ուղիներով էր ընթանում: Այս առումով առանձնանում էր հատկապես Կովկասի փոխարքայությունը, որի բազմազգությունը կանխորոշեց պարբերական մամուլի յուրօրինակ համակարգի ձևավորումն ու ազդեց գրքի գովազդի զարգացման վրա:

Մեր ուսումնասիրության նպատակն է պարզել, թե զարգացման ինչ ուղիներ է անցել պարբերական մամուլի մատենագիտական գովազդը Ռուսական կայսրությունում և, մասնավորապես, Կովկասի կենտրոն Թիֆլիսում: Մեր խնդիրն է պարզել այն գործոնները, որոնք ազդել են պարբերական մամուլում մատենագիտական գովազդի զարգացման վրա: Պատմահամեմատական մեթոդի ընտրությունը հնարավորություն է տալիս առավել հստակ ստանալու ուսումնասիրվող թեմայի ընդհանուր պատկերը:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Թիֆլիսում հրատարակվող պարբերականների մատենագիտական գովազդի զարգացման վերաբերյալ համակողմանի գիտական ուսումնասիրություններ չեն կատարվել՝ չնայած մատենագիտական գովազդը պարբերական մամուլի հայտարարությունների բաժնում ունեցել է գերիշխող դիրք: Գրահրատարակչական գործն ու մատենագիտական գովազդը գտնվել են անմիջական փոխհարաբերության և փոխազդեցության մեջ: Թեմայի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս լրացնելու հայ պարբերական մամուլի զարգացման վերաբերյալ մինչ օրս կատարված համակարգային ուսումնասիրությունների ևս մեկ բաժինը:

Ուսումնասիրության շրջափուլն ընդգրկում է 1819-1865 թթ. ժամանակահատվածը: Պայմանական մեկնակետ ենք համարել Թիֆլիսում լույս տեսած առաջին՝ «Սաքարթվելոս գազեթի»[1] թերթի հրատարակվելու տարեթիվը, իսկ որպես այս փուլի ավարտ դիտարկում ենք 1865թ. ապրիլի 6-ը, երբ

[1] 1820թ.-ին վերանվանվել է «Քարթուլի գազեթի»:

ուժի մեջ մտան «Գրաքննության և տպագրության ժամանակավոր կանոնները», որոնցով բազմաթիվ փոփոխություններ կատարվեցին գրահրատարակչական ոլորտում և գովազդային գործունեության մեջ:

Սակայն կարծում ենք, որ անհրաժեշտ է նախ համառոտ ներկայացնել Ռուսաստանում ձևավորված մատենագիտական գովազդի այն ավանդույթները, որոնց մի մասը նախադրյալ դարձավ Թիֆլիսի պարբերական մամուլում գրքի գովազդի զարգացման համար:

Մատենագիտական գովազդը Ռուսաստանում 18-րդ դարասկզբից մինչև 1865թ.: Մինչև 17-րդ դարը Ռուսաստանում գրատպության գործը գտնվում էր եկեղեցու վերահսկողության ներքո. հետագայում այն դարձավ Պետրոս Մեծի լայնածավալ բարեփոխումների համար անհրաժեշտ և «կարևորագույն լծակներից մեկը» [1]: Շատ կարճ ժամանակում կրոնական գրքերն իրենց տեղը զիջեցին աշխարհիկ՝ գիտահանրամատչելի, իրավաքաղաքական և գեղարվեստական գրականությանը:

Ռուս գիտնական Ա. Չեբոտարևը, ներկայացնելով ռուսական գրքի տպագիր գովազդի զարգացման փուլերը, սկզբնավորման շրջան է համարում 18-րդ դարասկիզբը՝ նկատելով, որ այդ ժամանակ ռուսական գրքերի գովազդները սկսում են տպագրվել և՛ Ռուսաստանում, և՛ արտասահմանում: Սակայն նկատելի են որոշ տարբերություններ. Ռուսաստանում դրանք հրատարակվում էին առանձին թերթիկներով: Ռուսական առաջին տպագիր թերթը՝ «Ведомости»-ն (1703–1727թթ.), մինչև իր վերակազմավորումը և վերանվանումը՝ բացառությամբ 1710թ. ներկայացրած «Քաղաքացիական գրքերի ցուցակի», այդպես էլ մատենագիտական գովազդ չի տպագրում: Իսկ արտասահմանյան պարբերականներում ռուսական գրքերի գովազդները հիմնականում տեղեկատվական բնույթի գրացուցակներ էին, որոնց մեջ «առկա էր նաև գովազդային բաղադրիչը» [2]:

Այդ հայտարարությունները առևտրային նպատակ չէին հետապնդում: Ինչպես նկատում է Ն. Կոպանևը, մատենագիտական գովազդների միջոցով փորձ էր արվում ազդելու արևմտաեվրոպական հանրային կարծիքի վրա և հերքելու ««բարբարոսական Մոսկովիայի» մասին անհիմն ենթադրությունները, որոնք տարածվում էին Ռուսաստանի թշնամիների կողմից: Շատ հաճախ գրքերի մասին հայտարարությունները պատճառ էին դառնում քաղաքական ելույթների համար եվրոպական հայտնի ամսագրերի էջերում [3]:

Ա. Չեբոտարևը զարգացման հաջորդ շրջափուլերը պայմանավորում է Սանկտ Պետերբուրգում 1725թ. հիմնադրված Գիտությունների ակադեմիայի և 1755թ. Մոսկվայում բացված համալսարանի գործունեությամբ: Կրթական և գիտական այս երկու հաստատությունները դարձան Ռուսաստանի գլխավոր պաշտոնաթերթերի՝ «Санкт-Петербургские ведомости» (1728թ.) և «Московские ведомости» (1756թ.) հրատարակիչները: Բացի այդ՝ այս հաստատություններն իրենց տպարաններում ոչ միայն հրատարակում էին բազմաթիվ գրքեր, օրացույցներ, ամսագրեր, թերթեր, այլ նաև «ակտիվորեն զբաղվում էին գրահրատարակչական իրենց արտադրանքի գովազդով» [4]՝ պարբերականների էջերը հաճախ տրամադրելով մատենագիտական հայտարարություններին:

Հետագայում մասնավոր գրավաճառներին՝ 1771թ. Ի. Գարտունգին[2], 1776թ. Ի. Վեյտբրեխտին և Ի. Շնորին, թույլատրվում է բացել սեփական տպարաններ, հրատարակել գրքեր, գովազդային թերթիկներ: Գրքերի վերահսկողությունն իրականացնում էին Գիտությունների ակադեմիան, Սինոդը և ոստիկանությունը, որը միևնույն ժամանակ տալիս էր գովազդային թերթիկների տպագրման թույլտվությունը: Հատուկ հրամանով պարտադրվում է տպագրել նաև կատալոգներ [5], որոնք, սակայն, ոչ այնքան գովազդային, որքան վերահսկողական գործառույթ էին կատարում:

Ինչպես շեշտում է Ա. Չեբոտարևը, «գրահրատարակչական գործում որակական փոփոխությունները, որոնք անմիջապես ազդեցին գրահրատարակչական գովազդի վրա, սկսվեցին 1783թ. հունվարի 15-ից» [6], երբ բոլոր քաղաքներում թույլատրվեց հիմնել տպարաններ և տպագրել ինչպես ռուս, այնպես էլ օտարալեզու գրականություն: Փաստացի տպարանների գործունեությունը համարվում է ձեռնարկատիրական, և տպարանների հիմնադրումը հնարավոր է դառնում բոլոր քաղաքներում առանց հատուկ թույլտվության: Ըստ օրենքի՝ պարզապես անհրաժեշտ էր տեղեկացնել ոստիկանությանը գործունեության մասին: Լեզվական խտրականություն նույնպես չկար: Միայն արգելվում էր տպագրել «եկեղեցական և քաղաքացիական կանոններին հակառակ, կամ էլ գայթակղող որևէ նյութ» [7]:

---

[2] Ի. Գարտունգին թույլատրվում է տպագրել միայն օտարալեզու գրքեր, իսկ ռուսական գրքերի տպագրությունը ևս 5 տարի մնում է պետական տպարանների մենաշնորհ:

1787թ. հուլիսի 27-ին ստորագրվեց ևս մեկ հրաման, համաձայն որի մասնավոր տպարաններին արգելվում էր տպագրել, իսկ գրավաճառներին՝ վաճառել կրոնական գրքեր, աղոթարաններ, որոնք չէին տպագրվել հոգևոր կամ կրթական հաստատությունների տպարաններում [8]: Դրա մենաշնորհը տրվում էր հոգևոր տպարաններին: Այսինքն՝ կրոնական թեմատիկայով գրահրատարակչական արտադրանքի գովազդի վերահսկողությունն ինքնըստինքյան անցնում էր հոգևոր իշխանությանը:

Ինչպես տեսնում ենք, մինչև 19-րդ դարասկիզբ արդեն ձևավորվում և նախանշվում են մատենագիտական գովազդի գրաքննական կանոնների հիմնական սկզբունքները և վերահսկող մարմինների պաշտոնական պարտականությունները:

Իրապես ճակատագրական որոշում կայացվեց նաև 1803թ., որի պատճառով Ռուսական կայսրությունում գրեթե կես դար հապաղեց պարբերական մամուլի գովազդային գործունեության զարգացումը, և առաջընթաց ապրեց մատենագիտական գովազդը: Այսպես, 1803թ.-ից Սանկտ Պետերբուրգում և Մոսկվայում պարբերական մամուլում պաշտոնական և մասնավոր հայտարարությունների տպագրության իրավունքը տրվում է միայն պաշտոնաթերթերին («Санкт-Петербургские ведомости», «Московские ведомости»)[3] և այդ քաղաքների ոստիկանական տեղեկագրերին [9]: Այս որոշումը գործադրվեց մինչև 1862թ.: Եվ այս ընթացքում միայն որոշ պարբերականներ էին ստանում իրենց թեմատիկ ուղղվածությանը համապատասխան գովազդային հաղորդագրության տպագրության թույլտվություն: Ու չնայած մայրաքաղաքների պաշտոնաթերթերում տպագրվում էին պաշտոնական, ապրանքների վաճառքի, ծառայությունների մատուցման և այլ տեսակի մասնավոր հայտարարություններ, այնուամենայնիվ ակնհայտ է, որ գրքի գովազդն ավելի եկամտաբեր էր: Պատճառն այն էր, որ գրահրատարակչությունը՝ որպես արդյունաբերություն, բավականին արագ էր զարգանում, իսկ գրքի գովազդը խթանում էր այդ գործընթացը և բավականին արդյունավետ էր: Բացի այդ, գովազդի այս տեսակը թույլատրված էր պետության ողջ տարածքում [10], ինչի պատճառով էլ օրեցօր աճում էր դրանց քանակը: Պատահական

[3] Որոշման նպատակն էր մասնավոր հայտարարությունների միջոցով լրացուցիչ եկամուտ ապահովել կրթագիտական հաստատությունների համար՝ թեթևացնելով պետության բեռը:

չէ, որ, օրինակ, «Московские ведомости» թերթն ավելի թանկ էր տպագրում մատենագիտական, քան առևտրային հայտարարությունները [11]:

Նկատենք, որ 1804, 1826 և 1828 թվականներին ընդունված Գրաքննչական օրենքներով, դրանցից բխող տարբեր որոշումներով և բազմաթիվ շրջաբերականներով կարգավորվում էր միայն մայրաքաղաքներում և նահանգային կենտրոններում տպագրվող պաշտոնաթերթերի՝ պետական և մասնավոր հայտարարություններ տպագրելու իրավունքը, վերահաստատվում էր մայրաքաղաքներում լույս տեսնող մասնավոր պարբերականների՝ ապրանքների վաճառքի, ծառայությունների մատուցման կամ անձնական բնույթի հայտարարությունների տպագրման արգելքը: Իսկ գավառական կենտրոններում սակավաթիվ մասնավոր թերթերը տպագրում էին հայտարարություններ և գովազդներ, չնայած դրա համար օրենսդրական որևէ հստակ դրույթ չկար. որոշ դեպքերում այդ բացը կարգավորվում էր տարբեր շրջաբերականներով:

Միևնույն ժամանակ գավառական մասնավոր թերթերի մեծ մասը զրկված էր պաշտոնական հայտարարություններ տպագրելու իրավունքից [12]: Դրանց տպագրման թույլտվությունը ստանում էին հիմնականում այն պարբերականները, որոնց տպագրման վայրում պաշտոնաթերթ դեռևս չէր հիմնադրվել:

Սակայն մայրաքաղաքներում ու գավառական կենտրոններում առկա գրաքննական ակնհայտ տարբերությունների հետ միասին կար մեկ ընդհանուր օրինաչափություն. ի տարբերություն այլ ապրանքների ու ծառայությունների, անձնական բնույթի հայտարարությունների, որոնք տպագրվում էին ոստիկանության թույլտվությամբ՝ մատենագիտական գովազդի տպագրությունը թույլատրվում էր գրաքննչական մարմինների կողմից [13]: Բացառություն էին կազմում կրոնական և բժշկագիտական գրքերը, որոնց գովազդային հաղորդագրությունների տպագրման իրավունքը տրվում էր համապատասխանաբար հոգևոր իշխանության և առողջապահական ոլորտի պատկան մարմինների կողմից:

Մատենագիտական գովազդը Թիֆլիսի պարբերական մամուլում 1819–1865թթ.: Եթե Սանկտ Պետերբուրգում և Մոսկվայում պարբերական մամուլի զարգացումը քիչ թե շատ կայուն ընթացք ուներ, ապա գավառական քաղաքներում մինչև 19-րդ դարի կեսը պարբերական մամուլին բնորոշ էր

ընդհատվողականությունը [14], տպագրության պարբերականության անկայունությունը, հրատարակությունների կարճատևությունը: Փաստացի հենց այդպես էլ զարգանում էր պարբերական մամուլի գովազդը, և որպես գովազդային հաղորդակցության ուղի՝ այն իր արդյունավետությամբ շատ հաճախ զիջում էր բանավոր, արտաքին և տպագիր (գովազդային թերթիկներ, գնացուցակներ և այլն) գովազդներին:

Նման իրավիճակը հատուկ էր նաև Թիֆլիսի պարբերական մամուլի համակարգին, որի զարգացումն ուներ որոշ առանձնահատկություններ: Դրանք պայմանավորված էին Կովկասի բազմազգությամբ և Կովկասի բնակիչների անհավասարաչափ զարգացվածությամբ: Մատենագիտական գովազդն այս գործոնների անմիջական կրողն էր:

Թիֆլիսի պարբերական մամուլը միատարր չէր. տարբեր տարիներին այստեղ լույս էին տեսնում պաշտոնական և մասնավոր պարբերականներ: Սրանցից յուրաքանչյուրն իր գործառույթն ուներ. այդ հանգամանքը նույնպես ազդում էր գովազդային բաժինների ու մասնավորապես մատենագիտական հայտարարությունների տպագրման վրա:

Դիտարկենք այդ պարբերականները՝ ըստ առանձին խմբերի:

Պաշտոնական մամուլ: Թիֆլիսում առաջին թերթը՝ «Սաքարթվելոս գազեթի»-ն, հրատարակվել է 1819թ., սակայն դեռևս «18-րդ դարավերջին ռուսական թերթերի և ամսագրերի առաքումը Վրաստան սովորական երևույթ էր դարձել» [15], իսկ 19-րդ դարի առաջին քառորդում Վրաստան էին հասնում արևմտաեվրոպական ամսագրերն ու լրագրերը [16], ինչը փաստում է, որ գրքի գովազդի մշակույթն արդեն ծանոթ էր լրագրերի աշխատակիցներին: Բացի այդ, Թիֆլիսում լույս տեսնող լրագրերի առաջին հիմնադիրները Կովկասի կառավարիչներն էին, իսկ աշխատակիցները՝ մեծ մասամբ ռուս մտավորականության ներկայացուցիչները (հիմնականում ընդդիմադիր հայացքներով), որոնց մի մասի համար Կովկասը աքսորավայր էր: Նկատելի է, որ նրանք նույնպես կարևորում էին պարբերական մամուլի՝ որպես քարոզչության միջոցի նշանակությունն ու մատենագիտական հայտարարությունների դերը:

Այսպես, վրացերեն առաջին պարբերականը՝ «Սաքարթվելոս գազեթի»-ն, հիմնադրվում է գեներալ Ա. Երմոլովի նախաձեռնությամբ և ունենում առավելապես քաղաքական ու գործառական նշանակություն: Չնայած ներ-

կայացված ծրագրում մասնավոր հայտարարությունների և մատենագիտական նորությունների կամ հայտարարությունների մասին նշումներ չկային [17] (թերթի ծրագիրն ավելի ընդհանրական էր), այդուհանդերձ դրանք տպագրվում էին: Օրինակ՝ «Սաքարթվելոս գազեթի»-ում նշված է, որ Կովկասի զինվորական կորպուսի տպարանում «հրատարակվել են ռուս-վրացական զրույցներ «Ռուսաց լեզվի ինքնուսույց» անվանումով» [18]: Վրացի պատմաբան Դ. Վատեյշվիլին կարծում է, որ թերթի հենց այս համարում հայտարարության հետ միտումնավոր է հրապարակված այն որոշումը, որի համաձայն «պետական ծառայության ընդունվում են միայն իշխանական և ազնվական ծագում ունեցող այն անձինք, որոնք տիրապետում են ռուսաց լեզվին» [19]:

1828թ. լույս տեսնող «Тифлисские ведомости»[4] ռուսերեն պաշտոնաթերթի ծրագրով նախատեսված էր առանձին հավելվածով հրատարակել պաշտոնական և մասնավոր հայտարարություններ [20]: Մատենագիտական նորությունների և ազդի վերաբերյալ առանձին դրույթներ ներկայացված չէին, սակայն այս պարբերականում նույնպես տպագրվում են մատենագիտական հայտարարություններ: Այսպես, «Тифлисские ведомости»-ն տեղեկացնում է, որ հրատարակության է ընդունվել Գրաքննչական մարմնի կողմից հավանության արժանացած «Վրացական քերականությունը», որը «կազմել է Թիֆլիսի վարժարանի ուսուցիչ Դադաև-Մագարսկին: Ցանկացողները կարող են բաժանորդագրվել կա՛մ անմիջապես դիմելով հրատարակչին <…>, կա՛մ «Тифлисские ведомости» հրատարակության վարչությանը <…> Բաժանորդագրվողների անունները կտպագրվեն գրքի վերջում» [21]:

Գովազդի հիշյալ երկու օրինակները բացահայտում են Թիֆլիսի պարբերական մամուլում մատենագիտական գովազդի ձևավորման առաջին տարիների հիմնական առանձնահատկությունները.

ա. գովազդի հասցեագրողները գրքի արտադրության նախաձեռնողներն են (առաջին դեպքում՝ պատվիրատուն, երկրորդ դեպքում՝ գրքի հեղինակը), որոնք միևնույն ժամանակ հանդես են գալիս վաճառողի դերում,

[4]Լույս է տեսել նաև վրացերեն և ֆարսի լեզվով: Լույս է տեսել նաև թերթի գրական հավելվածը:

բ. գրքերի գովազդը զարգանում է երկու հիմնական ուղղությամբ. առաջին դեպքում այն քաղաքական շահեր է հետապնդում, երկրորդ դեպքում դառնում է սոցիալական ազդի նախատիպ և կատարում կրթական-մշակութային գործառույթ,

գ. գրքի գովազդը հանդես է գալիս որպես միջմշակութային հաղորդակցության միջոց, որի շնորհիվ ապահովվում է միջհամայնքային, ազգամիջյան ու ներպետական կապը,

դ. գրքին բաժանորդագրվելը և առավել ևս այն ունենալը շեշտում են անձի սոցիալական կարգավիճակը ու որոշակի պատվանիշի գործառույթ կատարում՝ ներկայացնելով, իսկ ավելի ճիշտ՝ գովազդելով ոչ թե հենց ստեղծագործությունը կամ նրա հեղինակին, այլ գրքի սեփականատիրոջը: Գովազդային գործունեության նման հնարքները բնորոշ էին նաև պարբերական հրատարակություններին:

1838թ. Թիֆլիսում լույս տեսավ «Закавказский вестник» պաշտոնաթերթը, որի ծրագրում մատենագիտական հայտարարություն տպագրելու մասին որևէ դրույթ նշված չէր [22]: Նկատենք նաև, որ հրատարակման առաջին տարիներին կովկասյան պաշտոնական շաբաթաթերթում մատենագիտական հայտարարություններ չէին տպագրվում: Դրանք սկսեցին տպագրվել հիմնականում 1840-ականների երկրորդ կեսից ,և մինչև 1856թ., երբ «Закавказский вестник»-ը դարձավ «Кавказ» լրագրի պաշտոնական հայտարարությունների հավելված, գրեթե յուրաքանչյուր համարում տպագրվում էր մեկ կամ մի քանի մատենագիտական գովազդ:

1845թ. փոխարքա իշխան Վորոնցովի նախաձեռնությամբ և O. Կոնստանտինովի անմիջական խմբագրությամբ լույս ընծայվեց «Кавказ» կիսապաշտոնական շաբաթաթերթը[5], որը 1856թ.-ից մինչև 1918թ. հանդիսացավ Կովկասի փոխարքայության գլխավոր պաշտոնաթերթը: Այս լրագրում մատենագիտական հայտարարությունները տպագրվում էին պարբերաբար: Մատենագիտական նորությունների և հայտարարությունների տպագրության թույլտվությունը հաստատված էր ծրագրի երրորդ՝ ֆելիետոնի բաժնի

---

[5] Սկզբում այն հրատարակվում էր որպես մասնավոր պարբերական (1846–1847թթ. լույս է տեսել նաև հայերեն. այդ մասին կխոսենք հաջորդիվ), սակայն պետական գանձարանին պարտք լինելու պատճառով O. Կոնստանտինովը 1850թ. Տպագրության իրավունքը թողնում է վերջինիս՝ ի դեմս Կովկասի փոխարքայության Գլխավոր վարչության (РГИА, ф. 776, оп. 12, 1883г., д. 51, ч. 2, л. 73–74):

երկրորդ կետով՝ հետևյալ ձևակերպմամբ. «Ռուսաստանում և արտասահմանում լույս տեսնող Կովկասի վերաբերյալ մատենագիտական ստեղծագործությունների մասին, ինչպես նաև Կովկասում հրատարակվող գրքերի հաշվետվության» [23] տպագրություն:

Նկատենք, որ ի տարբերություն նախորդ երեք պաշտոնական պարբերականների ծրագրերի, որոնցում մատենագիտական նորությունների և ծանուցումների տպագրությունը հատուկ դրույթով առանձնացված չէր՝ դեռևս կիսապաշտոնական «Кавказ» լրագրի համար մատենագիտական բաժնի տպագրությունը արդեն սահմանվում է առանձին կետով:

«Кавказ»-ում տպագրվող մատենագիտական հայտարարությունները ոչ միշտ էին շահույթ հետապնդում: Օրինակ՝ թերթի էջերում տպագրվել են Գ. Պերևալենկոյի գրքերի հայտարարությունները, որոնցում հեղինակը նշում էր, որ գրքերից ստացված շահույթի մի մասը կփոխանցվի այրիներին և որբերին [24]: Բարեգործական նպատակներով գրավաճառության նմանատիպ օրինակներ հետագայում հաճախ կարելի է հանդիպել պարբերական մամուլի գովազդներում: Իսկ ընդհանուր առմամբ հաջորդող տարիներին գրահրատարակչական արտադրանքը բազմիցս դառնում է սոցիալական գովազդի օբյեկտ (օրինակ՝ վրացական «Ցիսկարի» մասնավոր պարբերականի շահույթը ենթադրվում էր օգտագործել Սբ. Նինայի հոգևոր ճեմարանի կարիքների համար [25]): Փաստորեն, մատենագիտական գովազդը կատարում էր նաև սոցիալական ազդի գործառույթ:

Սոցիալական կարևոր գործառույթ էին կատարում նաև խմբագրությունները, որոնց համար գրագիտության տարածումը նույնպես կարևոր նշանակություն ուներ: Օրինակ՝ «Кавказ» թերթի խմբագրությունն օժանդակում է հեղինակներին ու հրատարակիչներին գրքի տարածման հարցում. հենց խմբագրատանը սկսում են ընդունել որևէ նորատիպ գրքի գովազդի պատվեր և զբաղվում են այդ գրքի առաքմամբ [26]:

Մասնավոր պարբերականներ: Եթե պաշտոնաթերթերի համար պարբերականների գործառութային կարևորությունը բխում էր առավելապես կառավարման, իսկ որոշ դեպքերում նաև՝ տնտեսական և սոցիալական շահերից[6], և մատենագիտական գովազդը զարգանում էր հենց այդ դրդապատ-

[6] Կովկասի կառավարիչները հույս ունեին պարբերականների շահույթի որոշակի մասնաբաժնով իրականացնել որոշ սոցիալական ծրագրեր, ինչը, սակայն, չի իրագործվում բաժանորդների սակավաթիվ լինելու պատճառով:

ճառների շնորհիվ, ապա մասնավոր պարբերականների դեպքում սկզբնական տարիներին տնտեսական շահագրգռվածությունը համընկնում էր վրաց և հայ ժողովուրդների ազգային ինքնաճանաչման, գրականության և մշակույթի զարգացման ու մտավոր գործունեության մակարդակի բարձրացման պահանջմունքի հետ: Ընդհանուր առմամբ, լրագրերն ու ամսագրերը և, մասնավորաբար, դրանցում առկա մատենագիտական նորությունների բաժիններն ու հայտարարությունները պահանջմունքը վերածում էին պահանջարկի:

Գրականակենտրոն քաղաքականության համար մատենագիտական գովազդը լավագույն միջոցներից մեկն էր, որի շնորհիվ հետաքրքրություն էր ձևավորվում գրականության, գրքի՝ որպես ստեղծարարական և նյութական ապրանքատեսակի նկատմամբ:

Պատահական չէ, որ գրքերի և ընթերցանության տարածման համար գովազդի կարևորությունն ընդգծում էին հենց հրատարակիչները: Օրինակ՝ Թիֆլիսում մտահղացված, սակայն այդպես էլ տարբեր պատճառներով լույս չտեսած պարբերականների ծրագրերում կարևորվում է մատենագիտական հայտարարության դերը: Այսպես, 1820-ական թվականներին արքեպիսկոպոս Ներսես Աշտարակեցին մտադրություն ուներ հրատարակելու գիտական եռամսյա պարբերական՝ «Տարեգրութիւն հայոց գրագիտական» վերնագրով, որտեղ պետք է տպագրվեին «յայտարարութիւնք նորանոր գրեանց՝ որ տպագրեալ լինին յորևիցէ տեղի աշխարհի, հանդերձ մարդավարական քննութեամբ, գովասանական և քաջալերական ճառաբանութեամբ…» [27]: 1830-ական թվականներին Հակոբ և Դավիթ Արզանյանները Գրաքննության գլխավոր վարչություն ուղղված խնդրագրում նշում են, որ «Արևելյան մեղու» թերթը նախատեսում են տպագրել երկու լեզվով՝ հայերեն և վրացերեն, նորությունների և գրական բաժիններով: Գրական բաժնում մտադիր էին ներկայացնել արևելյան լեզուներով տպագրվող գրքերի վերլուծությունը, լուսավորության տարածման համար անհրաժեշտ միջոցները և ունեցած ձեռքբերումները, ասիական ժողովուրդների ավանդույթները, ինչպես նաև քարոզներ, բանաստեղծություններ և այլն [28]:

Ինչպես վերը նշեցինք, մասնավոր պարբերականները մատենագիտական տեղեկատվություն տպագրելու թույլտվություն ստանում էին նախապես՝ ծրագրերի հաստատման ժամանակ: Ընդ որում՝ սկզբնական շրջանում հայկական և վրացական պարբերականներում գրքի մասին նորությունը և գրքի գովազդը՝ ըստ ներկայացման ձևի, մեծ մասամբ տարբերակված չէին,

չնայած երբեմն տպագրվում էին տարբեր՝ մատենագիտական կամ հայտարարությունների բաժիններում[7]:

Փաստացի մատենագիտական հայտարարությունները ազգային լեզուներով զարգացող մամուլի համար որպես նորության տեսակ էին ընկալվում: Թիֆլիսում լույս տեսնող հայկական «Կովկաս» պարբերականը, որը ռուսական համանուն թերթի՝ որոշակի փոփոխություններով տպագրվող հայերեն տարբերակն էր և տպագրվում էր մասնավոր անձանց նախաձեռնությամբ, նախապես հայտարարած գրական-բանասիրական բաժնից բացի՝ երբեմն առանձին տպագրում էր նաև մատենագիտական գովազդներ: Մասնավոր հիմունքներով տպագրվող հայկական «Արարատ» [29], «Մեղու Հայաստանի» [30], «Կռունկ Հայոց աշխարհին» [31] և վրացական «Ցիսկարի» [32], «Սակարթվելոս մոամբե» [33] պարբերականների ծրագրերում այս կամ այն կերպ (ընդհանրական կամ մասնավորեցված) արձանագրված էին մատենագիտական նորությունների տպագրման դրույթները:

Ի տարբերություն սրա՝ նկատենք, որ նույն պարբերականների հրատարակիչները ներկայացրած ծրագրերում մասնավոր հայտարարություններ տպագրելու դրույթ չէին ներկայացրել: Սակայն թե՛ «Արարատ»[8], թե՛ «Մեղու Հայաստանի» [34] պարբերականները ծանուցում էին, որ ընդունում են մասնավոր հայտարարությունների տպագրության պատվերներ:

Փաստացի այս շրջանում Կովկասի պարբերականների՝ գրաքննող մարմնին ներկայացրած ծրագրերում թեմատիկ բաժինների վերաբերյալ հստակ ձևակերպումներ չկային. պարբերականների թեմատիկ ուղղությունը առավել ընդգրկուն էր: Այս հանգամանքը պայմանավորված էր նաև նրանով, որ Կովկասում գրաքննչական մարմինների գործունեությունը դեռևս սկզբնավորման փուլում էր, իսկ ընդհանուր առմամբ, «Ռուսաստանում գրաքննչական մարմինների ձևավորումը դանդաղ էր ընթանում, և գործունեության սկզբնավորման ժամանակ չկար միանմանություն» [35]: Այս իրողությունը պայմանավորված էր տվյալ տարածաշրջանում իշխանությունների ունեցած քաղաքական շահերով, սոցիալ-տնտեսական դրությամբ, գրահ-

---

[7] Այս մասին մանրամասն տե՛ս **Դանիելյան Տ.**, Գրքի գովազդը թիֆլիսահայ պարբերական մամուլում (1846–1865թթ.) // «Հայագիտության հարցեր», Եր., 2019, էջ 130:

[8] Այս մասին մանրամասն տե՛ս **Սանթոյան Ա., Դանիելյան Տ.**, Գովազդային հաղորդագրության դրսևորման ձևերը Գ. Պատկանյանի «Արարատ» շաբաթաթերթում // ՎՊՀ գիտական տեղեկագիր, Եր., 2015, էջ. 165–171:

րատարակչական գործի տեխնիկական հնարավորություններով և լեզվամշակութային գործոններով: Հատկապես վերջին հանգամանքն էր ազդում Կովկասում գրահրատարակչական գործի ու մատենագիտական գովազդի դանդաղ զարգացման վրա:

Եզրակացություն

Ամփոփելով մեր ուսումնասիրությունը՝ կարող ենք արձանագրել, որ Ռուսական կայսրության պարբերական մամուլի համակարգում գովազդային գործունեության կարգավորումն ուներ տարբերակիչ բնույթ: Եթե մայրաքաղաքային և գավառական պաշտոնաթերթերի գովազդային գործունեությունը զարգանում էր գրեթե օրինաչափ, ապա մասնավոր պարբերականների գովազդային գործունեությունն ուներ զարգացման մի շարք առանձնահատկություններ: Թիֆլիսում մասնավոր պարբերականներին թույլատրվում էր տպագրել առևտրային գովազդ, սակայն մինչև 1865թ. հրատարակվող մասնավոր պարբերականները տպագրում էին մեծ մասամբ մատենագիտական հայտարարություններ և այս առումով գրեթե նմանվում էին Սանկտ Պետերբուրգի և Մոսկվայի պարբերականներին, որոնց թույլատրվում էր տպագրել բացառապես մատենագիտական գովազդ: Պաշտոնական պարբերականներում մատենագիտական նորությունների և հայտարարությունների տպագրության թույլտվությունը նախապես չէր արձանագրվում, իսկ մասնավոր հիմունքներով տպագրվող պարբերականների համար այդ դրույթը հաստատվում էր նախապես: Սրան հակառակ՝ առևտրային հայտարարություններ հրատարակող թերթերում դրանց տպագրության վերաբերյալ որևէ դրույթ արձանագրված չէր գրաքննող մարմնին ներկայացրած ծրագրերում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Луппов С.П.* Книга в России в первой четверти 18 века, Л., Наука, 1973. С. 359.
2. *Чеботарев А.М.* К вопросу об уточнении первого этапа развития рекламы книги в России в XYIII веке // Вестник Казанского государственного университета культуры и искусств, Казань, 2012, № 1, с. 122, https://cyberleninka.ru/article/n/k-voprosu-ob-utochnenii-pervogo-etapa-razvitiya-reklamy-knigi-v-rossii-v-xviii-veke.
3. *Копанев Н.А.* Реклама русских изданий за границей в первой половине 18в. // Книга в России XVI – середина XIXвв., Л., БАН СССР, 1987. С. 46.
4. *Чеботарев А.М.* Развитие рекламы книги в России XVIII века: к вопросу об уточнении второго этапа развития рекламы книги в России в XYIII веке // Вестник Казанского государственного университета культуры и искусств,

Казань, 2012, N3-1, https://cyberleninka.ru/article/n/k-voprosu-ob-utochnenii-vtorogo-etapa-razvitiya-reklamy-knigi-v-rossii-v-xviii-veke.
5. Полное собрание законов Российской империи (այսուհետ՝ ПСЗРИ), 1-ое собрание, № 14495.
6. *Чеботарев А.М.* Развитие рекламы книги в России XVIII века: к вопросу об уточнении третьего этапа развития рекламы книги в России в XYIII веке // Вестник КемГУКИ, № 34/2016. С. 237. https://cyberleninka.ru/article/n/razvitie-reklamy-knigi-v-rossii-xviii-veka-k-voprosu-ob-utochnenii-tretiego-etapa.
7. ПСЗРИ, 1-ое собр. (1649–1825). Т. 21, № 15634.
8. ПСЗРИ, 1-ое собр. (1649–1825). Т. 22, № 16556.
9. Российский государственный исторический архив (այսուհետ՝ РГИА), ф. 772, оп. 1, д. 5489, л. 4–5.
10. РГИА, ф. 772, оп. 1, д. 4634, л. 127.
11. Там же. Л. 127 об.
12. Там же. Л. 61 об.
13. Там же. Л. 61 об.
14. *Лепилкина О. И.* Система русской провинциальной периодической печати (XVIII – начало XXв.), М., ИЛЕКСА, 2010. С. 61.
15. *Ватейшвили Д. Л.* Грузия и европейские страны, Том 3, Грузия и Россия, XVIII – XIXвв., кн. 3, М., Наука, 2006. С. 317.
16. *Нечкина М. В.* Грибоедов и декабристы, М.: Изд-во Академии Наук СССР, 1951. С. 208.
17. РГИА, ф. 733, оп. 57, д. 58, л. 2 и об.
18. «Սաքարթվելոս գազեթի», Թիֆլիս, 1821, № 12 (վրացերեն):
19. *Ватейшвили Д.Л.* Грузия и европейские страны, Т. 3, Грузия и Россия, XVIII – XIX вв., кн. 3, М.: Наука, 2006. С. 379.
20. РГИА, ф. 777, оп. 1, д. 861, л. 8–9.
21. «Тифлисские ведомости», Тифлис, 1830, № 80.
22. ПСЗРИ, 2-ое собр. (1825–1881). Т. 11, № 9296.
23. РГИА, ф. 776, оп. 12, 1883г., д. 51, ч. 1, л. 3.
24. «Кавказ», 1846, № 3.
25. РГИА, ф. 1268, оп. 5, д. 104, л. 1.
26. «Кавказ», 1850, № 99.
27. *Երիցեան Ա.Դ.* Պատմութիւն 75-ամեայ գոյութեան Ներսիսեան հայոց հոգեւոր դպրոցի, որ ՚ի Թիֆլիզ (1824–1899թթ.), հ. Ա. (1824–1850թթ.), վեց պատկերով, Թիֆլիզ, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1898, էջ 132:
28. РГИА, ф. 772, оп. 1, д. 1062, л. 3.
29. РГИА, ф. 1268, оп. 3, д. 266, л. 3 и об.
30. РГИА, ф. 1268, оп. 9, д. 324, л. 2.
31. РГИА. ф. 1268. оп. 10. д. 266, л. 3–4.
32. РГИА. ф. 1268. оп 5, д. 104, л. 1.

33. РГИА. ф. 1268. оп. 10, д. 69, л. 2 и об.
34. «Մեղու Հայաստանի», 1858, № 5:
35. *Гринченко Н.А., Измозик В.С., Патрушева Н.Г., Сомов В.А., Эльяшевич Д.А.* История цензурных учреждений прибалтийских губерний (конец XVIIIв. – 1917г.) // Книжное дело в России в XIX – начале XX в, С-Пб, Изд-во Российской национальной библиотеки, 2003. С. 122.

ОСОБЕННОСТИ БИБЛИОГРАФИЧЕСКОЙ РЕКЛАМЫ В ПЕРИОДИЧЕСКОЙ ПЕЧАТИ ТИФЛИСА (1819–1865 гг.)

Т.Р. Даниелян

АННОТАЦИЯ

В Российской империи в течение долгих лет книга, как объект рекламы, имела почти монопольную привилегию по отношению к другим видам товаров. Это явление было обусловлено рядом политических, социально-экономических и культурных факторов, под влиянием которых и формировались цензурные принципы, и развивалась периодическая печать.

В столицах Российской империи, Санкт-Петербурге и Москве, и в провинциальных городах газетная и рекламная деятельность имели разные пути развития: если рекламная деятельность столичной и провинциальной официальной прессы была почти схожа, то в рекламной деятельности частной периодики имелся ряд различий. В этом смысле особенно выделялся центр наместничества Кавказа, Тифлис, многонациональность которого предопределила формирование своеобразной системы периодической печати и повлияла на развитие библиографической рекламы.

Целью нашего исследования является выяснение путей развития библиографической рекламы в периодической прессе Тифлиса.

Задача исследования заключается в выявлении факторов, влияющих на развитие библиографической рекламы.

Актуальность темы обусловлена тем фактором, что библиографическая реклама издаваемой в Тифлисе периодической прессы не подвергалась всестороннему научному изучению, хотя и занимала доминирующее положение в разделе объявлений периодической прессы. Изучение темы дает возможность дополнить проведенные до сих пор системные исследования еще одного раздела истории армянской журналистики.

В качестве условной исходной точки мы приняли год издания напечатанной в Тифлисе первой газеты («Сакартвелос газети»), а завершающим данный этап счи-

таем 6 апреля 1865 года, когда в силу вошли «Временные правила цензуры и печати», в соответствии с которыми были проведены многочисленные изменения в сфере книгопечатания и рекламной деятельности.

С 1803 года право на печатание официальных и частных объявлений в периодической прессе Санкт-Петербурга и Москвы предоставляется только официальным газетам («Санкт-Петербургские ведомости», «Московские ведомости») и полицейским ведомостям этих городов. Это решение действовало до 1862 года. В данный период лишь некоторые периодические издания получали разрешение на печатание рекламных сообщений, соответствующих их тематическому профилю. И хотя в столичной официальной прессе печатались как официальные, так и частные объявления, тем не менее, очевидно, что книжная реклама была прибыльнее. Причина заключалась в том, что книгопечатание, как производство, развивалось довольно быстро, а книжная реклама была очень эффективна и стимулировала это развитие. Помимо этого, указанный вид рекламы был разрешен по всей территории страны, в результате чего с каждым днем возрастало количество такой рекламы.

Основными отличительными признаками первых лет формирования библиографической рекламы тифлисской периодической прессы были:

а. адресантами рекламы являются инициаторы производства книги (заказчики, авторы книг), которые одновременно выступают в роли продавца;

б. реклама книги развивается в двух основных направлениях: в первом случае она преследует политические интересы, во втором – становится прототипом социальной рекламы и выполняет культурно-образовательную функцию;

в. реклама книги выступает как средство межкультурной коммуникации, обеспечивающее межобщинную, межнациональную и межгосударственную связь;

г. подписка на книгу и, особенно, обладание ею подчеркивают социальный статус личности, представляя, а, точнее, рекламируя не само произведение или его автора, а владельца книги. Подобные приемы рекламной деятельности были присущи и периодическим изданиям.

В официальной прессе Тифлиса библиографическая реклама по объему и количеству уступала место официальным объявлениям и коммерческим рекламам разных товаров и услуг.

Частной прессе Тифлиса разрешалось печатать торговую рекламу, однако издаваемая до 1865 года частная пресса печатала в основном библиографические объявления, и в этом смысле почти уподоблялась той столичной периодике, которой разрешалось печатать исключительно библиографическую рекламу.

Если для официальных газет функциональная важность периодики вытекала преимущественно из управленческих, а иногда даже из экономических и социальных интересов, и библиографическая реклама развивалась благодаря этим побуждениям, то для частной периодики в начальный период экономическая заинтересованность совпадала с потребностями грузинского и армянского народов в самопозна-

нии, в развитии литературы и культуры, поднятии уровня интеллектуального развития. В целом, газеты и журналы и, в частности, разделы их библиографических новостей и объявлений, превращали потребность в спрос.

Для литературно-центрической политики библиографическая реклама являлась одним из лучших средств, формирующих интерес к книге как виду творческих и материальных продуктов. Неслучайно, что важность роли рекламы в распространении книг и чтения подчеркивали сами издатели.

Первоначально в армянской и грузинской периодике новость о книге и ее реклама преимущественно не различались по форме представления, хотя порой печатались в разных разделах: в библиографическом и в разделе объявлений. Библиографические объявления на национальных языках воспринимались в качестве новостей.

Наряду с очевидными цензурными различиями в столицах и губернских центрах, было одно общее сходство: в отличие от частных объявлений, которые печатались по разрешению полиции, печатание библиографической рекламы разрешалось органами цензуры. Исключение составляли религиозные и медицинские книги, разрешение на печатание которых давали, соответственно, духовенство и органы сферы здравоохранения.

Ключевые слова: Санкт-Петербург, Москва, официальная газета, книга, цензура.

THE PECULIARITIES OF BIBLIOGRAPHY ADVERTISING IN PERIODICAL PRESS OF TIFLIS (1819–1865)

T. Danielyan

ABSTRACT

The article studies the peculiarities of the development of bibliography advertising in the periodical press of Tiflis. By comparing the regularities in the development of advertising activities of official and private periodicals in Tiflis and the capitals (Saint Petersburg and Moscow), the author points out that until 1865 in the private periodicals of Tiflis bibliography advertising was dominating in the section of announcements though some private periodicals in contrary to the newspapers and magazines printed in the capitals had the right to publish other commercial announcements. The official newspapers were developing nearly by the same regularities: the bibliography advertising was inferior with its volume and quantity to the official and other commercial announcements.

Keywords: Saint Petersburg, Moscow, official newspaper, book, censorship.

ИСКУССТВОВЕДЕНИЕ

УДК 7.01

Поступила: 06.08.2019г.
Сдана на рецензию: 03.09.2019г.
Подписана к печати: 25.10.2019г.

ԱՎԱՆԳԱՐԴԸ ՈՐՊԵՍ ՊՈԵՏԱԿԱՆ ԿԻՆՈՅԻ ՀԻՄՔ

Ա.Տ. Վարդիկյան

Երևանի Թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ

arturvardikyan992@gmail.com

ԱՄՓՈՓՈՒՄ

«Արվեստի ապամարդկայնացման» դարաշրջանում՝ 1910-20-ական թվականներին, հանդիսատեսի համար ամենատարօրինակ մշակութային երևույթներից էր 1920-ականների կինոավանգարդը: Նույնիսկ հարգված կինոգետ Զիգֆրիդ Կրակաուերը, ով կինոյի էությունը սահմանել է իր հանրահայտ գրքի «Ֆիզիկական իրականության վերարտադրություն» ենթավերնագրում, չափազանց քննադատաբար էր մոտենում այս շարժմանը, քանի որ ավանգարդիստ կինոգործիչներն իրենց փորձարարական կարճամետրաժներում ներկադրային առարկաներն ու մարդկանց զրկում էին որոշակիությունից և հանում նրանց իրենց բնական համատեքստերից: Սակայն եթե մենք ավանգարդիստական կինոն նույն հարթության վրա դիտարկենք, ինչ պոեզիան, ապա ակնհայտ է դառնում, որ ֆորմալիստական այս փորձերի ողջ իմաստն էր ազատել կինոարվեստը պատմողականության կապանքներից, բազմիմաստություն հաղորդել կինոկադրի բնածին մենիմաստությանը և բացահայտել կինոյի երկակի էության մյուս՝ օնիրիկ կողմը, որը պերճորեն նկարագրել է Պիեր Պաոլո Պազոլինին: Սա իրավացի է ոչ միայն Ֆերնան Լեժեի, Վալթեր Ռութմանի և Հանս Րիխթերի դադաիստական ֆիլմերի, այլև նույն դարաշրջանի իմպրեսիոնիստական կինոերկերի դեպ-

քում, որոնք նույնպես ձգտում էին ընդլայնել այսպես կոչված «նարատիվային ալիքի» սահմանները: Հետագայում՝ 1960-ականներին, ավանգարդիստական սկզբունքներն իրենց զարգացումը ստացան հայ կինոռեժիսորներ Արտավազդ Փելեշյանի և Սերգեյ Փարաջանովի արվեստում, սակայն բացառապես ֆորմալիստական փորձեր անելու փոխարեն նրանք ստեղծեցին կինոյի մի տեսակ, որն իսկապես պոետական էր իր էությամբ:

Հիմնաբառեր՝ կինոավանգարդ, դադաիզմ, իմպրեսիոնիզմ, սյուրռեալիզմ, պոետական կինո, Զիգֆրիդ Կրակաուեր, Պիեր Պաոլո Պազոլինի, Արտավազդ Փելեշյան, Վելիմիր Խլեբնիկով:

1920-ական թվականները կինոյի պատմության գուցե ամենաhետաքրքրա-շարժ և ամենաշրջադարձային ժամանակաշրջանն էին: Դրանց նախորդող երկու տասնամյակների ընթացքում կինեմատոգրաֆն արդեն հասցրել էր ձևավորել շատ որոշակի և համատարած ավանդույթներ, որոնց հիմքում պատմողականության սկզբունքներն էին: 1920-ականների եվրոպական կինոավանգարդը հե-ղափոխական էր այն առումով, որ հետզհետե կոտրեց կինոյի վերաբերյալ բոլոր ավանդական պատկերացումները՝ ջանալով հաղթահարել ֆիլմարվեստի բնական սահմանափակումները, ինչպիսիք էին ներկադրային բովանդակության որոշակիությունը, ներկադրային առարկայի բնական համատեքստի պահպանումը և նարատիվային կախվածությունը: Հենց ավանգարդիստական ֆիլմերում են ծնվել ոչ նարատիվային՝ իր էությամբ պոետական կինոյի այն սկզբունքները, որոնք հետագայում զարգացրեցին և կատարելագործեցին հայ ռեժիսորներ Արտավազդ Փելեշյանը և Սերգեյ Փարաջանովը:

Ըստ անվանի գերմանացի կինոտեսաբան Զիգֆրիդ Կրակաուերի, ով արտահայտում էր դարասկզբի դոմինանտ տեսակետը՝ կինոյի էությունն իր վավերագրայնության մեջ էր: Ահա այսպես է նա խոսում կինոյի մասին իր՝ «Կինոյի տեսությունը. ֆիզիկական իրականության վերարտադրությունը» հանրահայտ գրքում. «Ֆիքսված բացատրության պատճառով՝ արվեստ հասկացությունը չի ներառում ու չի կարող ներառել իսկապես «կինեմատոգրաֆիկ» ֆիլմերը՝ նրանք, որոնք ընդգրկում են ֆիզիկական իրականության ասպեկտները՝ թույլ տալով մեզ վերապրել դրանք: Այնինչ հենց նրանք են գեղագիտական տեսանկյունից վավեր, ոչ թե ավանդական արվեստի գործեր հիշեցնող ֆիլմերը: Եթե կինոն ընդհանրապես արվեստ է, ապա այն հաստատ

պետք չէ խառնել արվեստի արդեն հաստատված տեսակների հետ» [1]: Հետևաբար զարմանալի չէ, որ Կրակաուերը կտրականապես դեմ էր կինոավանգարդի ցանկացած դրսևորումներին՝ համարելով, որ դրանք էապես հակասում են կինոյի բուն էությանը [2]:

Չնայած Կրակաուերի գիրքը 1960 թվականին է տպագրվել, նա այս հայացքներն արտահայտում էր դեռ 1920-ականներից՝ որպես վերոհիշյալ կինոգործընթացների անմիջական մասնակից փորձելով գտնել կինոյի ուրույն տեղն արվեստների համակարգում:

Ժամանակի ընթացքում պարզ դարձավ, որ կինոն երկակի արվեստ է: Մի կողմից այն, ինչպես իրավացի պնդում է Կրակաուերը, ավելի ռեալ ու հստակ կարող է վերարտադրել իրական աշխարհը, քան ցանկացած այլ արվեստ: Եթե ռեժիսորն իր առաջ նման առաքելություն է դնում, ապա ստացված ֆիլմում ներառված իրականության կտրվածքի ու հանդիսատեսի միջև միակ միջնորդը հեղինակի անհատականությունն է: Ի տարբերություն այլ արվեստների՝ կինոն չպետք է, ավելի ճիշտ՝ միայն հեղինակի ցանկության դեպքում է պարտադրված «իր տեսածը» փոխակերպել պայմանական արտահայտչամիջոցների, ինչպես թատրոնում է կամ երաժշտության մեջ: Բնականաբար որոշակի պայմանականություն ամեն դեպքում կա, քանի որ կինոկադրը սահմանափակ է. այն չի կարող ներառել ամեն ինչ, այդ իսկ պատճառով հեղինակը պետք է պայմանականորեն որոշի՝ ինչն ընդգրկել, իսկ ինչը՝ ոչ:

Մյուս կողմից, 1920-ականներից շուրջ չորս տասնամյակ անց, երբ կինոն, շարունակելով անընդհատ զարգանալ, արդեն վաղուց իր հաստատուն տեղն էր զբաղեցրել, իտալացի կինոռեժիսոր, գրող, պոետ ու կինոտեսաբան Պիեր Պաոլո Պազոլինին, ըստ էության, կհակադարձի Կրակաուերին իր «Պոետական կինո» հոդվածով: Մասնավորապես Պազոլինին գրում է. «Կինեմատոգրաֆն օնիրիկ (երազային) բնույթ է կրում իր մոդելների (թվարկենք դրանք՝ շրջակա իրողության սովորական դարձած, հետևաբար անգիտակցական դիտումնքը, միմիկան, հիշողությունը, երազները) տարրականության ու առարկաների՝ որպես պատկերային խոսքի սիմվոլների, նախաքերականության սկզբունքային դոմինանտության արդյունքում» [3]: Եվ քիչ անց. «[…] կինոյի լեզուն իր էությամբ «պոետական լեզու» է: Սակայն եթե պատմական տեսանկյունից նայենք, […] կտեսնենք, որ մի քանի շատ արագ ընդհատված ու կինոյի ակունքներից սերող փորձից հետո որոշակի կինեմատոգրաֆիկ ավանդույթ է ձևավորվել, որը նախ և առաջ «արձակ լեզուն» է հի-

շեցնում, կամ առնվազն՝ «նարատիվային արձակի լեզուն» [4]: Բնականաբար, սա անմիջապես չի հակասում Կրակաուերի գրածին, սակայն վկայում է, որ այդ պահին կինոն չափազանց մեծ ճանապարհ էր անցել և հասցրել մշակել ու վերամշակել այն, ինչ 1920-ականներին ներկայացնում էր ֆորմալիստական փորձերի տեսքով:

Կինոն ի սկզբանե նույնքան օժտված է եղել որոշակիությամբ, որքան իրենց էությամբ իսկական պոետական կերպարներ կերտելու բացառիկ հնարավորությամբ: «Կինոյի հոր»՝ Դևիդ Վարկ Գրիֆիտի հայտնի խոսքերը, թե «կինոն տերևների շրշյունն է», ակնարկում են, որ իսկական կինոյի հիմքում կերպարայնությունն է, որը չի կարող բոլորովին զրկված լինել պոետականության տարրերից, այլ նույնիսկ ընդհակառակը՝ անհնարին է առանց դրա: Այսինքն, բոլորովին պատահական ու անբնական չէր, որ որոշ հեղինակներ կինոյում ինքնարտահայտման այլ եղանակներ էին փնտրում՝ ի հակառակ պատմողականությանն ու գրականության նմանակմանը, որը 1910-ականներին հետզհետե համակեց կինոն ու հանդիսատեսին և նորմա դարձավ նրա համար: Այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ պատմությունն ավելի դյուրըմբռնելի է, քան պատմության հետ հիմքերը խզել ձգտող պոեզիան: Ի վերջո սա՝ Խոսե Օրտեգա ի Գասետի խոսքերով, «արվեստի դեհումանիզացիայի» դարաշրջանն էր. բնականաբար մարդիկ խուսափում էին իրենց համար անհասկանալի երևույթից և ձգտում դեպի հին ավանդույթները յուրացնող նորը՝ պատմողական կինոն: Իսկ կինոպրոդյուսերները, տեսնելով որքան շահավետ կարող է լինեն կինոն, առանց երկմտելու ձգտում էին տալ հանդիսատեսին այն, ինչ նա ուզում է:

Ֆերնան Լեժեի, Վալթեր Ռութմանի, Վիկինգ Էգելինգի նման ավանգարդիստների արտասովոր գործունեության ավելի օբյեկտիվ ընկալման համար կարելի է համեմատական անցկացնել նրանց և ռուսական պոեզիայի Արծաթե դարաշրջանի ականավոր գործիչ Վելիմիր Խլեբնիկովի միջև:

Ահա վերջինիս «Перевертень» բանաստեղծությունը.

Кони, топот, инок,
Но не речь, а черен он.
Идем, молод, долом меди.
Чин зван мечем навзничь.
Голод, чем меч долог?
Пал, а норов худ и дух ворона лап.
А что? Я лав? Воля отча!
Яд, яд, дядя!
Иди, иди!

Мороз в узел, лезу взором.
Солов зов, воз волос.
Колесо. Жалко поклаж. Оселок.
Сани, плот и воз, зов и толп и нас.
Горд дох, ход дрог.
И лежу. Ужели?
Зол, гол лог лоз.
И к вам и трем с смерти мавки.

Ֆորմայի տեսանկյունից այն առավել ուշագրավ է նրանով, որ թե՛ ձախից աջ, թե՛ աջից ձախ բոլոր տողերը նույնն են: Բառեր ու ամբողջ տողեր կան, որոնք առանձին վերցված բացարձակ անիմաստ են: Տրամաբանորեն այս բանաստեղծությունն իսկապես ոչ մի իմաստ չունի, և, ինչպես ավանգարդիստական ֆիլմերի ռացիոնալիզացիան է զուր, այդպես էլ՝ Խլեբնիկովի գրվածքի: Սակայն կրկին ակնհայտ է, որ բառերի, հարցական նշանների ու շեշտերի շարվածքը հենց այնպես չէ որոշված, քանի որ մեկը ներգործում է մյուսի վրա, տարբեր տողերի տարբեր մասնիկներ ասես միմյանց են հղում և հարստացնում իրար իրենց բազմաբովանդակ հնչեղությամբ: Ցանկության դեպքում այստեղ որոշակի «պատմություն» էլ կարելի է նկատել: Սակայն այդ աղոտ սյուժեն ինքնաբերաբար է ծնվում արտահայտչականությունից, այլ ոչ թե արտահայտչականությունն է պայմանավորված սյուժեով: Բանաստեղծական սյուժեն չի պատմում, այլ արտահայտում է: Խլեբնիկովն ասես վերաբացահայտում է բառը՝ դնելով այն նոր համատեքստի մեջ, հանում է այն Վիկտոր Շկլովսկու ասած «ընկալման ավտոմատիզմից» ու լրիվ նոր շնչառություն հաղորդում նրան:

Տեսաբան Ռոման Յակոբսոնը գրում է, որ «Խլեբնիկովի պոեզիայում բառը կորցնում է առարկայությունը, այնուհետև ներքին և վերջապես՝ նույնիսկ արտաքին ձևը: Բոլոր ժամանակների ու ժողովուրդների պոեզիայում մենք անընդհատ տեսնում ենք, որ պոետին՝ Տրեդիակովսկու խոսքերով, հետաքրքրում է «ղողանջը միայն» [5]: Մի՞թե նույնը չէին անում ավանգարդիստները պոետական կինոյի լեզուն որոնելիս:

Ինչպե՞ս արտահայտել անարտահայտելին, եթե եղած բառերն ու ֆորմաները պարզապես բավարար չեն: Խլեբնիկովն այդ հարցն իր համար լուծում է բառաստեղծությամբ ու հանգավորման՝ մինչ այդ ընդունված կանոնների անտեսմամբ կամ ձևափոխմամբ, քանի որ նրա դեպքում դրանք ավելի շատ սահմանափակում են հիշեցնում: Պոետն իր առաքելությունն այսպես էր սահմանել.

Породе русской вернуть язык

Такой,
Чтоб соловьиный свист и мык
Текли там полною рекой.

Գիտակցաբար, թե ոչ, թերևս նույն խնդիրն էին իրենց առաջ դրել նաև Ֆերնան Լեժեն, Վալթեր Ռութմանը, Վիկինգ Էգելինգը, Հանս Րիխթերը և ուրիշները:

Ռութմանն, ով առավել հայտնի է 1927 թվականի «Բեռլին. մեծ քաղաքի սիմֆոնիան» ոչ խաղարկային ֆիլմով, իր գործունեությունն սկսել է մուլտիպլիկացիայում: Եվ չնայած նա նշանակալի մասնակցություն է ունեցել մեկ այլ մուլտիպլիկատորի՝ Լոթե Ռայնիգերի «Արքայազն Աիմեդի արկածները» (1926թ.) հանրահայտ նարատիվային հեքիաթ-մուլտֆիլմի ստեղծման մեջ, իր սեփական աշխատանքները զուրկ էին պատմողականության անգամ ամենաաղոտ նշույլից: Անվանումներն արդեն իսկ ամեն ինչ ասում են՝ «Լուսախաղ. օպուս I» (1921 թ.), «Լուսախաղ. օպուս II» (1923թ.) և այլն:

Նույնը կարելի է ասել մեկ այլ նշանավոր նկարիչ ու կինոփորձարարի՝ Հանս Րիխթերի մուլտիպլիկացիոն ֆիլմերի մասին՝ «Ռիթմ 21» (1921թ.), «Ռիթմ 23» (1923թ.), «Ռիթմ 25» (1925թ.): 5–10 րոպե տևող այս կարճամետրաժների ամբողջ ընթացքում պարզապես գունավոր լույսեր կամ երկրաչափական ֆորմաներ ենք տեսնում էկրանին: Ասենք, «Ռիթմ 21»-ը նվիրված է քառակուսուն, իսկ «Լուսախաղ. օպուս I»-ը գույնզգույն հիպերբոլներ ու վրձնահարվածներ հիշեցնող ֆորմաներն է ուսումնասիրում. դրանք ասես ձայնային ալիքների վիզուալիզացիայի արդյունքում ստացված պատկերներ լինեն:

Գերմանիայում ստեղծագործող շվեդ արվեստագետ Վիկինգ Էգելինգի «Անկյունագծային սիմֆոնիայում» (1923թ.) էկրանին մի քանի րոպե շարունակ արտ-դեկո ոճով արված ուղիղ անկյուններով ֆիգուրներ են հայտնվում ու երկու-երեք վայրկյան անց՝ անէանում: Ցանկության դեպքում այս ֆիգուրներում կարելի է իրական աշխարհի առարկաների ուրվագծեր գտնել՝ մարդկային գլուխ, ականջ, դաշնամուր և այլն:

Սակայն այս ֆիլմերից ոչ մեկը վավերագրական նյութ չի պարունակում: Չնայած ազնվության համար պետք է նշել, որ 1925 թվականին Հանս Րիխթերն ստեղծեց «Կինոուսումնասիրություն» կարճամետրաժը, որն արդեն իրական աշխարհի ֆորմաների հետ էր խաղում՝ մարդու աչքի, երեսի հետ, իսկ դրվագներից մեկում տեսնում ենք մուրճով գետնին հարվածող բանվորի նեգատիվ կադրերը, որոնք մոնտաժվում են նույն արագությամբ վար իջնող սև ու սպիտակ կոնի մուլտիպլիկացիոն պատկերի հետ:

Բոլոր ֆորմաները թղթի կտրվածքներով են արված, իսկ շարժումը կադր առ կադր է նկարվել: Հատկապես 1920-ականների համար սա հեշտ գործ չէր, ու մի ֆիլմն ավարտին հասցնելը կարող էր մեկ տարի տևել, եթե ոչ ավել: Ինչո՞ւ այսքան ժամանակ ու էներգիա ծախսել մի գործի վրա, որը թվում է՝ ոչ մի առնչություն չունի իրական աշխարհի հետ: Գուցե այս հեղինակները ձգտում էին պատկերային երաժշտությո՞ւն ստեղծել:

Ամեն դեպքում, այստեղ, ինչպես և Խլեբնիկովի դեպքում, գործ ունենք ընկալման ավտոմատիզմի հաղթահարման փորձի հետ: «Ռիթմ 21»-ում քառակուսին ցուցադրվում է բոլոր հնարավոր դիտանկյուններից ու բոլոր հնարավոր համադրություններով, և սա թույլ է տալիս հանդիսատեսին վերաիմաստավորել սովորական դարձած այդ երկրաչափական ֆորման կամ գոնե տեսնել այն այնպես, ինչպես մինչ այդ երբեք չէին տեսել: Իսկ «Կինոռւսումնասիրության» մուրճի դրվագը ստիպում է մարդկային շարժումը լրիվ այլ հարթության վրա ընկալել: Սա պարզապես համեմատություն չէ, թե իբր մուրճը գետնին զարկող տղամարդը գլխիվայր իջնող կոն է հիշեցնում: Միանման թվացող այս կադրերի շարունակ կրկնողության արդյունքում մարդն ու երկրաչափական ֆորման ասես նույնականանում՝ մեկ մարմին են դառնում: Փաստորեն սա արդեն ուղղակի զուգադրում չէ. սա մի ամբողջ աշխարհընկալման մանիֆեստ է:

Այս աշխարհընկալումը չափազանց մոտ է Արտավազդ Փելեշյանին: Սակայն կա մեկ որոշիչ նրբություն: Իրենց «ձևապաշտական խաղերով» ավանգարդիստները գտան պոետական կինո ստեղծելու բանալին: Փելեշյանն ընդունեց այդ բանալին ու հագեցրեց ֆորման իսկական պոետական բովանդակությամբ: Փելեշյանն այլևս խնդիր չուներ կինոլեզվի հնարավորությունները բացահայտելու: Այդ իսկ պատճառով նրա ֆիլմերում այդ ֆորման այլևս ինքնանպատակ չէր, ոչ էլ առարկաներն՝ ընկալման ավտոմատիզմից հանելու միջոց: Սա լրիվ նոր, իր էությամբ իսկապես պոետական աշխարհի բացահայտելու, կերտելու ճանապարհ էր:

Վերջ ի վերջո Կրակաուերի զայրույթն ավանգարդի հանդեպ որոշ առումով արդարացված էր. չէ՞ որ 1920-ականների ավանգարդիստական ֆիլմերի գերակշռող մասը՝ հաճախ չափազանց հետաքրքիր ու կարևոր, իրոք ընդամենը ֆորմալիստական փորձերն էին: «[...] այդ ուղղությունը շատ արագ վերածվեց ֆորմաներով խաղերի՝ դարձավ ինքնանպատակ: [...] Արտահայտչամիջոցներն սկսեցին պայմանավորել նպատակը, ձևային գաղափարը, բովանդակությունը: Այս ուղղությունը հետևողականորեն եկավ

իր տրամաբանական ավարտին՝ բովանդակությունը որոշող ֆորմային, ոչնչին» [6]:

Մինչ այժմ մենք խոսում էինք 1920-ական թվականների կինոավանգարդի միայն դադաիստական ու ֆուտուրիստական թևի մասին: Որպեսզի պոետական կինոյի սկզբնավորման դարաշրջանի պատկերն ամբողջական լինի, հարկ է ուսումնասիրել նաև կինոավանգարդի մյուս կարևոր ճյուղերը՝ իմպրեսիոնիզմն ու սյուրռեալիզմը:

1920-ականների սկզբում ֆրանսիական իմպրեսիոնիստների ալիքն ընդունված է «առաջին ավանգարդ» անվանել: Նրա տեսական առաջնորդը կինոքննադատ Լուի Դելյուկն էր, ով 1921 թվականին մի կողմ դրեց գրիչն ու անցավ իր գեղագիտական գաղափարների գործնական իրականացմանը:

Արդյունքում ծնվեց «Տենդ» ֆիլմը, որը կինոիմպրեսիոնիզմի մանիֆեստն ու լավագույն գործերից է համարվում: Շուրջ 30 րոպե տևող, զանազան փոքր իրադարձություններով ու մարդկային շփումներով հարուստ այս համր կինոնկարը գեթ մեկ լուսագիր չունի, բայց առանց դրա էլ լրիվ հասկանալի է: Շեշտը դրվում է ոչ թե սյուժեի, այլ տրամադրության վրա: Ըստ էության՝ ողջ ֆիլմը մի մեծ տեսարան է: Գործողությունները ծավալվում են մի առափնյա պանդոկում, որտեղ սկզբից ընդամենը մի քանի հաճախորդ կա: Սակայն հետզհետե պանդոկ են ներխուժում հարբեցող նավաստիներն ու թեթևաբարո կանայք. այստեղ են նաև պատահական ճամփորդները: Երեկոն վերածվում է համընդհանուր խնջույքի ու այնուհետև՝ համընդհանուր ծեծկռտուքի:

Կան գործող անձինք, որոնցից մի քանիսը նախապատերազմական հուշեր ունեն: Կա հանգույց ու հանգուցալուծում: Սակայն լուսագրերի բացակայությունը պերսոնաժներից յուրաքանչյուրին վերածում է տիպաժի. նրանք գրեթե զրկվում են իրենց անհատականությունից: Սրա արդյունքում էլ իրենց պատմությունն անհատական տպավորություն չի թողնում, այլ ասես կոչված է ուժգնացնել ճնշող ու մելամաղձոտ մթնոլորտը: Այսինքն, պատմությունը ծնվել է զգացողությունից, ոչ թե հակառակը:

Կինոիմպրեսիոնիզմի հիմքում հենց տպավորության անմիջական փոխանցման ձգտումն է: Ինքը՝ տպավորությունը, հասկացական երևույթ չէ, այլ՝ զգայական, հետևաբար նրա փոխանցման ձգտումով ստեղծված արվեստի գործերն իրենց էությամբ էլ պետք է պոետական լինեն: Ֆիլմեր կան, որոնք իրենց գաղափարը հասցնում են զուտ տաղանդավոր սցենարի շնորհիվ, իսկ կինոյի այլ արտահայտչամիջոցներն ուղղված են միայն սցենարին

ծառայելու համար (օրինակ՝ Ֆլորիան Հենկել ֆոն Դոներսմարկի «Ուրիշնե-րի կյանքը» դրաման, որը 2006 թվականին Ամերիկյան կինոակադեմիայի «Լավագույն օտարալեզու ֆիլմ» մրցանակին է արժանացել): Բայց լինում է և հակառակը, երբ սցենարը կա՛մ անվանական դեր է խաղում, կա՛մ պոետի-կայի հիմնարար բաղադրիչներից է միայն:

Նույնիսկ իմպրեսիոնիզմի հայրերից Էդուարդ Մանեի գեղանկարնե-րում որոշակի սյուժեներ կան, սակայն նրա արտահայտչականության հիմ-քում պատմությունը չէ, այլ պահի տպավորությունը:

Ուղղության առաջին ֆիլմի՝ «Տենդի» ստեղծման պահին կինոիմպրե-սիո-նիզմի գաղափարը սաղմնային վիճակում էր. Դելյուկն ամբողջովին դեռ չէր հրա-ժարվել պատմողականությունից:

Կինոիմպրեսիոնիզմն ասես հակադրվում էր կինոյի բնատուր հատ-կանիշներից ևս մեկին՝ գործողության վերածվող շարժմանը: Եթե կա գործո-ղություն, պետք է լինի նաև նարատիվ՝ պատմություն: «Պոետական կինո» հոդվածում Պիեր Պաոլո Պազոլինին ասում է, որ պոեզիան կինոյում հնա-րավոր է միայն որպես «պատմողական ալիբի»: Այսինքն, ֆիլմի պոետիկ կամ պոետական գեղարվեստական լուծումները պետք է հիմնավորված, ավելի ճիշտ՝ արդարացված լինեն սյուժեով, օրինակ՝ երբ հերոսը խենթ է: Հեղինա-կը որպես վառ օրինակ է բերում Միքելանջելո Անտոնիոնիի «Կարմիր անա-պատ» ֆիլմը (1964թ.), որտեղ գլխավոր հերոսուհին՝ Մոնիկա Վիտիի կա-տարմամբ, հետզհետե սկսում է կորցնել կապն իրականության հետ, և հենց դրա շնորհիվ է ռեժիսորն իրեն թույլ տալիս կադրի յուրօրինակ կոմպոզիցի-աներ ու արտասովոր գունային լուծումներ հորինել:

«Տենդը» պատմողական ալիբիից ազատվելու ասես առաջին փորձն էր: Այս ձգտումն իր գագաթնակետին հասավ իմպրեսիոնիզմի գլուխգործոց ֆիլ-մում՝ Դիմիտրի Կիրսանովի «Մենիլմոնտան» ժապավենում (1926թ.): Այստեղ նույնիսկ կարելի է ասել սև ծաղրի են ենթարկվում կինոն համակած պատ-մողականությունն ու հանդիսատեսի սպասելիքները: Ֆիլմն սկսվում է դա-ժան մարդասպանությունից. անհայտ հանցագործը կացնահարում է կնոջն ու ամուսնուն ու փախչում: Արդյունքում հանգուցյալների դեռափթիթ դուստրը հայտնվում է մանկատանը: Թվում է՝ ֆիլմը պետք է զարգանա ավանդական դետեկտիվի կանոններով: Սակայն սպանությունն այլևս չի հիշատակվում: Փոխարենն, ըստ էության, պարզապես հետևում ենք անա-նուն աղջնակին ու թե ինչպես է նա տարբեր նպատակներով զբոսնում Փա-րիզում:

Կինոիմպրեսիոնիստների հետ Արտավազդ Փելեշյանին հենց այս ձգտումն է միավորում: Սակայն եթե իմպրեսիոնիստների մոտ դա ամփոփվեց տարբեր աստիճանի հաջողությամբ պսակված ֆիլմերով, ապա թե՛ Փելեշյանը և թե՛ Սերգեյ Փարաջանովը կարողացել են կանգնեցնել ժամանակի մեջ հոսող կինոպատումը՝ արդյունքում ստեղծելով իսկական կինոպոեզիա: Ինչպես տեսանք, Փելեշյանը սա արել է շարժման անմիջական կրկնողության միջոցով (հիշենք «Տարվա եղանակները» ֆիլմում խոտի դեզերով սարերից իջնող մարդկանց կամ գառան հետնից ձնածածկ լանջերից վար նետվող հովիվների կադրերը): Իսկ Փարաջանովը շարժումը բացարձակ դադարի է բերել: Նրա դերասանները շարժվում են ստատիկ կադրի մեջ, և դա հիշեցնում է մեզ, որ սա կինո է, ոչ թե՝ լուսանկար: Այսինքն՝ շարժում որպես այդպիսին կա, բայց այն չի վերածվում գործողության [7]:

Կինոսյուրռեալիզմը՝ «երկրորդ ավանգարդն», ու մասնավորապես նրա մեծագույն վարպետներ Լուիս Բունյուելն ու Սալվադոր Դալին ևս խնդիր ունեին կոտրել ու կազմաքանդել կինոյի լեզուն՝ ինչպես ավանդական, այնպես էլ իմպրեսիոնիստական: Այդ ձգտումներն արտահայտվեցին սյուրռեալիզմի առայսօր չգերազանցված գլուխգործոցներում՝ «Անդալուզյան շուն» (1929թ.) և «Ոսկե դարաշրջանը» (1930թ.) ֆիլմերում:

Պազոլինին այս առիթով գրում է. «Իհարկե, լինում են նաև բացառիկ դեպքեր, երբ լեզվի պոետիկությունը հասցված է ծայրագույնի: Օրինակ՝ Բունյուելի «Անդալուզյան շունն» ամբողջովին արված է մաքուր արտահայտչականության ռեգիստրում, բայց դրա համար նրան տարբերակիչ նշան է պետք՝ սյուրռեալիզմը: Եվ պետք է ասել՝ որպես սյուրռեալիստական գործ այս ֆիլմը հիանալի է: Գրական ու գեղանկարչության շատ քիչ գործեր կարող են նրա հետ մրցել, որովհետև նրանց պոետիկ որակներն արատավորվում ու անիրական են դառնում բովանդակության, այսինքն՝ սյուրռեալիզմի պոետիկայի պատճառով, որի հիմքում բովանդակության բավականին կոպիտ բացարձակացումն է (ինչի պատճառով բառերն ու գույները կորցնում են իրենց էքսպրեսիվ մաքրությունը, որպեսզի ենթարկվեն բովանդակության հրեշավոր անորոշությանը): Ի հեճուկս դրան՝ բովանդակությամբ սյուրռեալիստական կերպարների մաքրությունը կինոյում շեշտվում է՝ ուրիշներով փոխարինվելու փոխարեն: Որովհետև սյուրռեալիզմով կինոյին ծառայության են անցնում երազների՝ բնույթով օնիրիկ իրականությունը, հիշողությունների անգիտակցականը և այլն» [8]:

Իրականում սյուրռեալիզմը կինոյում կանգնած է պատմողականության ու պոետականության ջրբաժանին: Սա աշխարհի օնիրիկ, բայցև սիմվոլիկ ընկալման համակարգ է: Սիմվոլը՝ ի հակառակ տպավորությանը, մետաֆորին, հիմնականում պատմողականություն է ենթադրում, քանի որ միշտ ակնարկում է, թե կոնկրետ ինչն է խորհրդանշում: Այն ստիպում է ընկալողին միանգամից պրպտալ ու գտնել այդ կապն իրական առարկայի կամ երևույթի հետ: Սյուրռեալիստները նոր իրականություն չեն ստեղծում. նրանք մեր իրականության մասին են խոսում, բայց ծայրահեղ վերացականության հասցված լեզվով[1]:

Օրինակ՝ չնայած բազմաթիվ դետալներ «Անդալուզյան շունը» ֆիլմում անիմաստ են թվում (և ռեժիսորների մտահղացմամբ էլ չպետք է կոնկրետ բացատրություն ունենան), ընդհանուր առմամբ պարզ է, թե ինչն են քննում ֆիլմի հեղինակները: Գլխավոր հերոսը ողջ ֆիլմի ընթացքում փորձում է հաղթահարել իր ճնշված ու թաքուն սեռական պահանջմունքները: Հանրահայտ տեսարաններից մեկում նա փորձում է տիրանալ վախից պատին գամված կնոջը և նրան մոտենալու փոխարեն՝ գետնից երկու պարան է վերցնում ու սկսում մեծ ջանքերով քաշել, բայց բեռն այնքան ծանր է, որ հազիվ մի քանի քայլ է կարողանում անել: Պարզվում է՝ պարաններին երկու սեպագիր տախտակ է ամրացված՝ տասը պատվիրաններով, երկու կաթոլիկ քահանա ու երկու էշի նեխած դիակ՝ դաշնամուրների մեջ: Մի՞թե այս սիմվոլը հավելյալ բացատրության, մեկնաբանության կարիք ունի: Այն ակնհայտ է ու մի ամբողջ պատմություն է իր մեջ պարունակում: Սա չի նշանակում, որ ինքը՝ տեսարանը, պարզունակ է, քանի որ այնքան արտահայտիչ է արված լուսավորության, կադրի կոմպոզիցիայի ու մոնտաժային ռիթմի տեսանկյունից, որ ակամայից ընդունում ես նրան այնպիսին, ինչպիսին կա:

Մեկ այլ տեսարանում հերոսների տուն է ներխուժում անդեմ մի մարդ, ով ծնողի պես անկյուն է կանգնեցնում տղամարդուն, ով, ինչպես և ֆիլմի սկզբում, վանուհու շորեր հիշեցնող զգեստ է հագել: Այնուհետև նա սպանում է «ծնողին», ով, պարզվում է, նույն դեմքն ունի, ինչ ինքը: Եվ այլն, և այլն…

Ֆրեյդիստները մեծ հաճույքով կվերլուծեն այս ֆիլմն ու հետաքրքրագույն եզրակացությունների կգան: Սա չափազանց տեղին կլինի, քանի որ իրենք՝ հեղինակները, բազմիցս ասել են, որ ֆիլմը ծնվել է իրենց երկուսի

---

[1] Հիշենք ֆրանսերեն *surrealism* բառի ուղիղ նշանակությունը՝ *գերռեալիզմ, ռեալիզմի վրա*:

երազների՝ Ֆրեյդի սիրելի անգիտակցականի թագավորության արտահայտումների միակցումից:

Իսկ «Ոսկե դարաշրջան» ֆիլմի գլխավոր հերոսները՝ կրկին տղամարդ ու կին, անընդհատ փորձում են սիրով զբաղվել, բայց ամեն անգամ հասարակական նորմերը խանգարում են նրանց: Մի տեսարանում նրանց վռնդում են ծովափից, քանի որ այդտեղ հավատացյալներ են հավաքված, իսկ մեկ այլ դրվագում տղամարդն ուզում է մոտենալ կնոջը խնջույքի ժամանակ, բայց քաղաքավարությունից դրդված՝ ստիպված է ձանձրալի ու ձևական զրույց վարել կնոջ մոր հետ:

Այս ֆիլմերի ֆրեյդիստական ու սոցիոլոգիական մեկնություններն ամենևին նրանց չեն արժեզրկում, քանի որ իրենք հենց դրա համար են ստեղված՝ որպեսզի սիմվոլիկ լեզվով ընկալվեն, որպեսզի ձեռնոց նետեն հասարակությանը: Այս դեպքում դժվար է նույնիսկ խոսել կինոնյութը որոշակիությունից զրկելու մասին, քանի որ սիմվոլիզմն արդեն իսկ կապում է հերոսներին ու բոլոր գործողություններն իրական և որոշակի աշխարհին՝ անկախ նրանից, որ հերոսներն անուն չունեն և ընկալվում են որպես ընդհանրապես տղամարդ ու ընդհանրապես կին:

Այս կետում սյուրռեալիստները կտրականապես հակադրվում են մնացյալ ավանգարդիստներին ու առավել ևս Փելեշյանին, քանի որ սխալ կլինի նրանց ֆիլմերը որևէ երևույթի սիմվոլիկ մեկնություն անվանել: Դրանք լրիվ առանձնաբար հայեցվող ստեղծագործություններ են, որոնց հեղինակներին հետաքրքրում է «ղողանջը միայն», իսկ Փելեշյանն այդ ղողանջին նաև համամարդկային հնչեղություն է տալիս:

Ցանկացած արվեստ ունի սահմաններ: Եվ յուրաքանչյուր արվեստի խնդիրներից մեկն այդ սահմանների ներքո անսահմանության հասնելն է՝ պայքարելով նյութի քարացածության դեմ: Գեղանկարչության մեջ կտավը երկչափ է, բայց նկարիչները զանազան հնարքներով անընդհատ ջանում են հարթության վրա եռաչափ պատկեր ստեղծել: Այդպես էլ կինեմատոգրաֆը: Հեռվանալով իր բնածին որակներից՝ կինոն գուցե ավելի է մոտենում իր իրական էությանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Kracauer S.* The Theory of Film. The Redemption of Physical Reality, New York, Oxford University Press, 1960. P. 40.
2. Նույն տեղը, գլուխ X:

3. *Пазолини П.П.* Поэтическое кино // сб. «Строение фильма», М., Радуга, 1984, С. 50.
4. Նույն տեղը:
5. *Якобсон Р.* Работы по поэтике. М., Прогресс, 1987. С. 313.
6. *Балаш Б.* Кино. Становление и сущность нового искусства, М., Прогресс, 1968. С. 167.
7. Տես՝ *Zakojan G.* Modello nazionale e cinema di poesia // "Il cinema della repubbliche Transcaucasiche Sovietiche". Marsilio Editori. Venezia, 1986, PP. 285–400.
8. *Пазолини П.П.* Поэтическое кино // сб. «Строение фильма». С. 53.

АВАНГАРД КАК ОСНОВА ПОЭТИЧЕСКОГО КИНО

А.Т. Вардикян

АННОТАЦИЯ

1920-е гг., возможно, самое интересное и решающее время в истории становления кино как искусства. В те годы кино за два десятилетия своего существования уже успело обзавестись определенными традициями, в основе которых были принципы повествовательной (нарративной) организации кинопространства. Однако киноавангард 1920-х годов был революцией в кинематографе в том смысле, что он постепенно разрушил традиционные представления об искусстве «движущихся картинок», стремясь избавиться от врожденных ограничений кино. В сущности, именно киноавангард нащупал и выявил грамоту поэтического киноязыка.

Ярым противником всего авангардистского творчества был именитый немецкий кинотеоретик Зигфрид Кракауэр, который сформулировал свое отношение к сущности киноискусства в подзаголовке своей знаменитой книги «Природа фильма: реабилитация физической реальности». Во второй и десятой главе своего труда Кракауэр резко критикует авангардистов за то, что в своих экспериментально-формалистских короткометражках они выводят людей и предметы из естественного контекста, лишая их конкретики и, следовательно, искажая реальность, реабилитация которой и является спецификой кино.

С течением времени, однако, теоретическая мысль начала говорить и об онирическом качестве киноискусства. В частности, именно этой теме посвящена знаменитая статья Пьера Паоло Пазолини «Поэтическое кино», написанная в 1960-х гг. Однако даже еще раньше фигурировала мысль, приписываемая отцу кинематографа американскому режиссеру Дэвиду Уарку Гриффиту, что «кино – это шелест листьев», что уже намекает на то, что в основе кино лежит образность, которая не может быть лишена определенных поэтических элементов, даже наоборот – невоз-

можна без них. Следовательно, нет ничего удивительного в том, что некоторые кинодеятели 1920-х гг. искали пути самовыражения вне повествовательности и имитации литературы, которые уже в 1910-х гг. поглотили кино и стали нормой для зрителей, так как рассказ легче для восприятия, чем поэзия в ее чистой форме.

Именно в этом контексте и следует рассматривать киноавангард. Если поставить авангардистские фильмы на ту же эстетическую плоскость, что и поэзию, то становится ясным, что смысл этих формалистских экспериментов – освободить кино от повествовательности, придать многозначность однозначному внутрикадровому содержанию и нащупать другой край двоякой сущности кино – ониризм. Дадаистские фильмы Фернана Леже, Вальтера Руттмана, Ганса Рихтера и Викинга Эггелинга можно сравнить с творчеством ярчайшего поэта Серебряного века Велимира Хлебникова. Стихотворние «Перевертень», каждая строка которого является палиндромом, с логической точки зрения полнейшая бессмыслица, как и большинство авангардистских фильмов. В обоих случаях, рационализация ни к чему не приведет.

Однако очевидно, что «кладка» слов, вопросительных и восклицательных знаков отнюдь не случайна. Они придают стиху определенный ритм, некоторые строки интуитивно отсылают к предыдущим, и между ними создается чувственная, даже бессознательная связь. Хлебников словно заново открывает слово, выводя его из «автоматизма восприятия», как говорил Виктор Шкловский. Роман Якобсон же пишет, что «слово в поэзии Хлебникова утрачивает предметность, далее внутреннюю, наконец, даже внешнюю форму. В истории поэзии всех времён и народов мы неоднократно наблюдаем, что поэту, по выражению Тредиаковского, важен «токмо звон» [Р. Якобсон. Работы по поэтике. М., “Прогресс”, 1987, стр. 299].

Не то же самое ли делали киноавангардисты 1920-х гг. в поисках языка поэтического кино? Ведь и здесь внутрикадровые предметы теряют свою предметность. В короткометражном фильме «Ритм-21» (1921) Ганса Рихтера на протяжении всей ленты мы видим на экране квадрат, который предстает перед нами со всех возможных ракурсов и во всех возможных комбинациях, что дает возможность зрителю переосмыслить эту простую геометрическую форму и увидеть ее такой, какой он ее никогда не видел. В более поздней ленте «Киноисследование» (1925) Рихтер делает то же самое с человеческим лицом, глазом, ртом, а в одном из эпизодов негативный кадр рабочего, бьющего молотом по земле, монтируется с мультипликационным конусом, словно протыкающего низ экрана. Два изображения раз за разом монтируются с такой бешеной скоростью, что становятся одним целым. Это не просто сравнение, дескать движение рабочего с молотом похоже на падающий конус. Это уже целый манифест специфического, поэтического миропонимания.

Это миропонимание и метод организации кинопространства очень близок ярчайшему представителю поэтического кино 1960-х гг. Артавазду Пелешяну, с одним лишь решающим отличием. Пелешян, Параджанов и другие представители поэтического кино 1960-х гг. уже не ставили себе цели создания грамоты поэтического

киноязыка, они лишь приняли ее из формалистских экспериментов 1920-х гг. и обогатили ее поистине высоким, поэтическим содержанием. Ведь, в конце концов, нельзя сказать, что претензии Кракауэра были вообще необоснованными. Причина быстрого упадка дадаистских фильмов 1920-х гг. именно в их формалистской сущности, которая делала любые произведения этого направления самоцелью.

Дабы сделать обзор эпохи выявление поэтического киноязыка наиболее цельным, надо еще несколько слов сказать о творениях импрессионистского и сюрреалистического крыла киноавангарда.

Стремление киноимпрессионистов освободиться от пут повествовательности наиболее ярко выразилось в фильмах основателя движения, киноведа Луи Деллюка и режиссера Димитрия Кирсанова. В основе киноимпрессионизма (как следует из названия) есть стремление непосредственной передачи ощущений момента. Само ощущение – не понятийное явление, а чувственное, следовательно, искусство, созданное из стремления его передачи, должно быть поэтическим по своей сущности. По сути, именно в импрессионистских лентах 1920-х гг. впервые выявилось желание освободиться от понятия, так называемого, «повествовательного алиби» (термин, сформулированный Пазолини в вышеупомянутой статье), которая гласила, что поэтичность в нарративном фильме может быть оправдана лишь психологической спецификой восприятия мира персонажами.

Сюрреализм, ярчайшими примерами в кино которого являются «Андалузский пес» (1929) и «Золотой век» (1930), стоит на грани повествовательности и поэтичности. Это весьма специфическая система восприятия мира, онирическая, но и символическая. Символ, в отличие от ощущения и метафоры, в основном предполагает повествовательность, так как он всегда намекает на тот предмет или явление, которое он символизирует. Он заставляет воспринимающего копаться и найти эту определенную связь между символом и настоящим предметом или явлением. Следовательно, сюрреалисты, в отличие от поэтов, не создают новую реальность: они говорят о нашей реальности, но крайне символизированным языком.

В этом смысле сюрреалисты противопоставляют себя всем другим авангардистам и в особенности кинопоэтам 1960-х гг., так как было бы странно называть ленты последних символическими интерпретациями каких-либо явлений. Напротив, это – абсолютно автономно созерцаемые творения искусства.

Каждое искусство имеет свои границы. И одна из важнейших задач каждого искусства – достигнуть безграничности в пределах своих границ. Авангард 1920-х гг. был первым таким опытом в кинематографе, который оказал огромное влияние на развитие не только поэтического, но и повествовательного кино.

Ключевые слова: киноавангард, дадаизм, импрессионизм, сюрреализм, поэтическое кино, Зигфрид Кракауэр, Пьер Паоло Пазолини, Артавазд Пелешян, Велимир Хлебников.

THE AVANT-GARDE AS THE BASIS FOR POETIC CINEMA

A.Vardikyan

ABSTRACT

In the era of “the Dehumanization of Art” one of the most confusing phenomena for the spectator was the cinematic avant-garde of the 1920s. Even the respected film scholar Siegfried Kracauer, who articulated the essense of cinema in the subtitle of his book *The Redemption of Physical Reality*, was severly critical of the movement, because in their experimental shorts avant-garde filmmakers would deprive all in-frame objects and people of their specificity and pull them out of their natural context. However, if one examines avant-garde films on the same aesthetic level as poetry, it becomes obvious that the point of these formalistic experiments was to free cinema from the chains of the narrative, convey polysemy to monosemantic in-frame content and discover the other side of the dual nature of film – onirism, eloquently described by Pier Paolo Pasolini. This is true not only in the case of the dada films by Fernand Léger, Walter Ruttman and Hans Richter, but also with respect to impressionist works of the same era, which also strived to widen the boarders of the so-called “narrative alibi”. Later on, in the 1960s, the avant-garde princples were further developed by Armenian filmmakers Artavazd Peleshyan and Sergei Parajanov, who, instead of realizing them in purely formalistic experiments, created a kind of cinema that was truly poetic in essence.

Keywords: avant-garde films, dadaism, impressionism, surrealism, poetic cinema, Siegfried Kracauer, Pier Paolo Pasolini, Artavazd Peleshyan, Velimir Khlebnikov.

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ

Авагян М.А.	к.э.н., доцент, преподаватель кафедры кафедры Экономики и менеджмента Европейского университета
Аветисян Д.П.	студент 2-го курса специализации «Юриспруденция» Института права и политики РАУ
Аршакян И.А.	аспирант кафедры Макроэкономики ЕГЭУ
Баядян В.А.	аспирант по направлению «Математическая экономика» факультета Экономики ЕГУ
Вардикян А.Т.	аспирант кафедры Истории и теории искусства Ереванского Государственного Института Театра и Кино
Геворгян Р.А.	д.э.н., к.ф.-м.н., профессор кафедры Математического моделирования в экономике ЕГУ
Даниелян Т.Р.	к.филол.н., доцент кафедры литературы Ванадзорского государственного университета им. Ов. Туманяна
Караварданян С.Л.	аспирант Института механико-машиностроения, транспортных систем и дизайна Национального политехнического университета
Карамян Т.С.	магистр 2-го года обучения кафедры Математического моделирования в экономике ЕГУ
Манукян С.А.	к.соц.н., эксперт исследовательско-аналитического центра «Орбели» Центра общественных связей и информации при Администрации Премьер-министра РА
Мирумян Р.А.	д. филос. н., профессор, преподаватель кафедры Политологии РАУ
Назаретян Г.А.	аспирант кафедры Политологии РАУ
Овян В.Р.	эксперт исследовательско-аналитического центра «Орбели» Центра общественных связей и информации при Администрации Премьер-министра РА
Петросян Л.С.	старший преподаватель кафедры Психологии РАУ
Погосян А.А.	аспирант кафедры Английской филологии факультета Европейских языков и коммуникации ЕГУ
Саргсян Д.О.	студент 4-го курса специализации «Политология» Института права и политики РАУ
Тунян С.А.	аспирант, преподаватель кафедры русского языка и профессиональной коммуникации РАУ
Шагиданова К.И.	к.и.н., доцент

СОДЕРЖАНИЕ

***Главный редактор РНИ** – М.Э. Авакян*
***Корректор** – Н.И. Маргарян*
***Компьютерная верстка** – А.Г. Антонян*

Адрес Редакции научных изданий
Российско-Армянского
университета:

0051, г. Ереван, ул. Овсепа Эмина, 123
тел./факс: (+374 10) 27-70-52 (внутр. 42-02)
e-mail: redaction.rau@gmail.com

Заказ № 23
Подписано к печати 10.01.2020г.
Формат 70x100 1/16. Бумага офсетная № 1.
Объем 15 усл. п.л. Тираж 100 экз.